Кушнерський

Дніпрова
Січ та війна

687
Ц-62

1914

25 SEP 2010

...գ յատկուած «Արփի» շաբաթաթերթի.

ՏԻԿ. ՄՈՒՇԵՂԻԿ ԵՒԵՆԳՈՒԼԵՑ

ՁԵՌՆԱՐԿ

ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ

ԸՍՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ

587
Ս-62

Տպարան «Էսպերանտոյ», Նիխաւետին. 17
1914

62

ՏԻԿ. ՅՈՒՅԷՆԻԿ ԵՒԷՆԳՈՒԼԵԱՆ

630
Յշ-եի

ՁԵՌՆԱՐԿ

ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ

ԸՍՏ ՏԷՕԳՕՐԻ

ԹԻՖԼԻՍ
Արգասիք «Խապիրաճեսո» Եվիդ. № 17.
1913

0 8 APR 2013

27.985

ՉԱՓՍ ՎԵՐՑՆԵԼԸ.

Չափս վերցնելու ժամանակ պէտք է ունենալ.

1. Սանտիմետր,
2. Մատիտ,
3. Մեծ թերթ թուղթ.
4. Մկրատ.
5. Բանոն.
6. Երիզ (тесемка) մօտ $1^1/_2$ արշ. երկարութեամբ։ Այն անձը, որից չափս են վերցնում, պէտք է անպատճառ հագած ունենայ պարզ հասարակ շոր և եթէ գործ է առում կօրսէտ, այդ դէպքում շորը պիտի աւնստած լինի կօրսետի վրայ, որպէս զի որը լայն չերևայ, ինչպէս այդ լինում է ապօտ կամ կօֆտա հագած դէպքերում և որի լայնութիւնից ձևակաղապարը (выкойка) լայն դուրս կը գայ, որի պատճառով և չափելու ժամանակ (примѣрка) կարողը ստիպւած կը լինի ուղղումներ անել։

Բացառութիւն են կազմում այս դէպում երեխաներ ու կօրսետ գործ չ'ածող անայք։

1289-98

ՄԱՆԿԱԿԱՆ ԶԳԵՍՏ.

Երեխայի չափս վերցնելը.

Չափս վերցնելու համար ամենայարմար կարը հետևեալն է,

1. Մէջքի երկարութիւնը.
2. Մէջքի լայնութիւնը.
3. Կրծքի երկարութիւնը.
4. Կրծքի լայնութիւնը.
5. Հիմնական չափը.
6. Մէջքի ծաւալը.
7. Կողքի երկարութիւնը.
8. Ամբողջ զգեստի երկարութիւնը։

Սոյն չափսերը իսկոյն պէտք է նշանակել թւանշաններով առանձին գրքոյկում։ Երկարութեան բոլոր չափսերը գրւում են ամբողջութեամբ, իսկ լայնութեանը կիսովին։

Նախ քան չափս վերցնելը երեխայի իրանամէջը (талія) պէտք է գօտկել երիզով։

Չափս 1. — Մէջքի երկարութիւնը չափւում է օձիքի մէջ տեղից մինչև գօտկատեղը, սրա համար սանտիմենտրը պէտք է բռնել ձախ ձեռքով օձիքի վրայից և աջով տանել ու չափել մինչև գօտկատեղը՝ մինչև կապւած երիզը և չափը նշանակել ամբողջովին։

Չափս 2. — Մէջքի լայնութիւնը։ Մէջքի լայնութիւնը չափելու համար սանտիմետրը

պէտք է տանել մէջքի ամենալայն տեղը և այն տեղով չափել, որտեղ թիակներն աւելի են դուրս ցցւած. այս չափը պէտք է վերցնել թոյլ և գրել միայն լայնութեան կէսը։

Չափս 3. — Կրծքի երկարութիւնը չափւում է այն տեղից, որտեղից չափեցինք մէջքի երկարութիւնը՝ օձիքի մէջտեղից մէջքի վրայով։ Այստեղից սանտիմետրը պէտք է թեքել և ուսի վրայով տանել մինչև գօտկատեղը՝ երիզը, որով կապել ենք մէջքը։

Այս դէպքում սանտիմետրը պիտի անցնի կոճկատեղերից 3—4 սանտիմետր հեռու։ Այս չափը վերցնելիս սանտիմետրը պիտի ձգել, որպէսզի երկար չը ստացւի, իսկ ուսերը պիտի պահել բարձր։ Սոյն չափը տետրի մէջ պէտք է նշանակել ամբողջապէս։

Չափս 4.—Կրծքի լայնութիւնը. այս դէպքում սանտիմետրը պէտք է մէկ թևի փորւածքից անցկացնել մինչև միւս փորւածքը ամենալայն տեղ կրծքի վրայով և այնքան թոյլ բռնել սանտիմետրը, որ քիչ իջնի մէջ տեղը. սոյն չափը նշանակել կիսովին։

Երբեմն պատահում է, երեխայի կրծքի և մէջքի լայնութեան թւանշանը միատեսակ է ստացւում, ուստի այս դէպքում կրծքին աւելացնում են 1—2 սանտիմետր։

Չափս 5.—Հիմնական չափը. Սա ամենագլխաւոր չափն է և սորա վերայ է հիմնուած նկարի մեծ մասը. սորա համար պէտք է շատ ճշտութեամբ վերցնել սանտիմետրով շրջապատել մէջքը և կուրծքը, անցկացնելով թևերի տակ բռնել թոյլ և բերել ուղիղ կրծքի մէջտեղը. այս չափը նշանակել կէս և դնել փակագծերի մէջ։

Չափս 6. — Մէջքի ծաւալը. Սանտիմետրով շրջապատել մէջքը և ստացուած չափը գրել կիսովին։

Չափս 7.— Կողքի երկարութիւնը կամ բարձրութիւնը. Սանտիմետրի ծայրը դնել թևի տակ և տանել մինչև մէջքի երիզը. այս չափը վերցնելու ժամանակ թևը վեր չբարձրացնել, ապա թէ ոչ երկար կ'ստացուի. այս չափը նշանակել ամբողջութեամբ։

Չափս 8. — Ամբողջ շորի երկարութիւնը. Վերցնել ուսի մէջ տեղից մինչև այնքան ցածը, որքան ցանկանում են երկարացնել ցածը. երկարութիւնը այս դէպքում կախուած է ցանկութիւնից։

5 տարեկանից մինչև 8 տարեկան երեխաների համար չափսերը ստացւում են մօտաւորապէս հետևեալ թւերով.

Մէջքի երկարութիւնը . . .	28	սանտ.
Մէջքի լայնութիւնը . . .	13	»
Կրծքի երկարութիւնը . . .	33	»
Կրծքի լայնութիւնը	14	»

Հիմնական չափը	(32)	»
Մէջքի ծաւալը	27	»
Կողքի երկարութիւնը . . .	14	»

Այն անձինք, որոնք դեռ նոր են սովորում ձևը, կարիք են զգում մշտական գրել այսպէս հերթով ամեն մի չափը, որպէսզի պարզ հասկացուի. բայց յետոյ երբ որ արդէն վարժւում են և գիտեն ամեն մի չափի նշանակութիւնը, գրում են միայն թիւը. օրինակի համար այսպէս՝ պատէր տղայի ազգանունը և թւանշանները։

28—13—33—14—(32)—27—14

ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓԸ.

Հիմնական չափը իմ վերցրած օրինակից ստացւել է 64 ս. պէտք է գրել կէս այսինքն (32) ս. և դնել փակագծի մէջ. յետոյ կտրել երկու տակ (ամրութեան համար) երկար թղթի կտոր 2 սանտիմետր լայնութեամբ, չափել նրա վրայ կէսը հիմնական չափի ստացած թւից. այժմ կ'ստացուի 16 սանտ. մնացած թուղթը կտրել, որպէսզի մնայ ուղիղ 16 ս., այսինքն ստացած հիմնական չափի կէսը. յետոյ բաժանել 4 մասի. ամեն մի չորրորդական մասը կոչւում է մեծ չափս, մեծ չափը կիսելով ստացւում է փոքր չափը։ Ամբողջ հիմնական չափից, մեծ չափը ստացւում է 16 երորդական մասը, իսկ փոքր չափը՝ 32 ե-

ըորդական մասը. երբ որ մեծ և փոքր չափերը պատրաստ կունենանք, կարելի է նկարել ձևակաղապարներ։

ԵՐԵԽԱՅԻ ՇՈՐԻ ՆԿԱՐԸ

Նկարելու ժամանակ յաճախ կ'պատահեն աջ ու ձախ գծերը. այս դէպքում երբ որ մէջ տեղ քաշած է ուղիղ գիծ (продольная), այն գծի վրայ քանոնը պէտք է դնել այնպէս, որ գիծը հաւասարապէս կիսէ. այդ գիծը կը լինի միջահատիչ կամ միջակտուր (поперечная), իսկ կողմերն էլ ըստ իւրենց դիրքի կը լինեն աջ և ձախ։

ՄԱՆԿԱԿԱՆ ՇՈՐԻ ՄԷՋԸ

Այն թղթի վրայ, որ պատրաստած է ձևի համար, նշանակել անկիւնից մի քիչ հեռու Ա. այստեղից քաշել ցած ուղիղ գիծ և նշանակել Բ. յետոյ Ա-ից դէպի Բ-ն վերցնել մէջքի երկարութիւնը վերցրած օրինակից 28 ս., այստեղից աջ կողմ քաշել ուղիղ գիծ և նշ. Բ. Այս գիծը կոչւում է մէջքի ծաւալի գիծ. Ա-ից էլ քաշել գիծ աջ կողմ նշ. Գ. սա կոչւում է օձիքի գիծ (նկարը 1). 28-ից դէպի Ա. վերցնել կողքի երկարութիւն 14 ս. և մէկ մեծ չափս նշ. Դ. այստեղից աջ կողմ քաշել գիծ ուղիղ և նշ. Ե. սա կլինի մէջքի լայնութեան գիծը. օձիքի

գծի վրայ Ա-ից վերցնել մէկ մեծ չափս նշ. Ж. յետոյ Դ-ից աջ վերցնել մէջքի լայնութիւն 13 ս. և այստեղից վեր վերցնել մէկ մեծ չափս ու նշ. З և միացնել ուղիղ Ж-ի հետ. սա կլինի ուսի երկարութիւնը, իսկ А և Ж կլինի օձիք. յետոյ В-ից ցած իջեցնել մէկ փոքր չափս և նշ. Н. այստեղից աջ վերցնել մէկ փոքր չափս և նշ. М. յետոյ միացնել կոր գծով З, В, և М-ն, սա կլինի թևի փորուածքի մէկ մասը. 28-ից աջ վերցնել 9 ս. նշ. И և միացնել М-ի հետ ուղիղ գծով. М և И. յետոյ բաժանել. մէջտեղը ձախ կողմ վերցնել 1 ս. և նորից միացնել թեթև կոր գծով М և И., որպէսզի մէջքը աւելի գեղեցիկ նստի. սորա համար 28-ից վերցնել աջ կողմը 1 ս. նշ. К. և միացնել Д-ի հետ ուղիղ գծով. և այսպէս մէջքի լայնութիւնը կմնայ 8 ս., մնում է փեշը նկարել. 28-ից դէպի Б-ն իջեցնել 10 ս. և միացնել К-ի հետ И-ից իջեցնել 10 ս. աջ կողմը աւելացնել 2 ս. և միացնել И-ի



Նկար 1

հետ. մնացած իուպկի երկարութիւնը կախ-
ու�ած է ցանկութիւնից, ով որքան ու-
զում է։

ՄԱՆԿԱԿԱՆ ՇՈՐԻ ԿՈՒՐԾՔԸ

Թղթի մէջ տեղը քաշել երկարութեամբ
ուղիղ գիծ. վերև նշ. Ա. իսկ ներքև Բ.



Նկար 2

Ա-ից դէպի Բ-ն չափել կրծքի երկարու-
թիւնը 33 ս. (նկարը 2). 33-ի վրայ քա-

շել աջ ու ձախ գիծ ծայրերին նշ. Փ և Х.
սա կլինի մէջքի ծաւալի գիծը։

ՈՒՍԸ ԵՒ ՕՁԻՔ

Որպէսզի նկարել ուս և օձիք, Ա-ից ցած
վերցնել երկու մեծ չափս, առաջինին նշ.
Բ. երկրորդին Գ. սրա վրայ քաշել աջ ու
ձախ գիծ ծայրերին նշ. Է և Ж. Գ-ից ձախ
վերցնել երկու մեծ չափս նշ. Օ և միաց-
նել Բ-ին. տանել քիչ հեռու և ծայրին նշ.
Н. Բ-ից դէպի Н վերցնել մէկ փոքր չափս
նշ. Р. Օ և Р գիծը կազմում է ուսը. Գ-ից
աջ վերցնել երկու մեծ չափս նշ. С. և
միացնել կոր գծով Р-ի հետ ոչ շատ խոր.
սա կլինի օձիքի փորուածքը։ Թևի փորուած-
քը ստանալու համար հարկաւոր է 33-ից
դէպի Ա վերցնել կողքի երկարութիւն
14 ս. և մէկ մեծ չափս ու նշ. Д. սրա
վրայ քաշել աջ ու ձախ գիծ ծայրերին և նշ.
З և І. Д-ից ձախ վերցնել դէպի З-ն. երեք
մեծ չափս, նշ. առաջինին И. երկրորդին К.
Л. Օ-ից ուղիղ գիծ քաշել մինչև մէջքի
գիծը, նշ. Ц, յետոյ К-ից դէպի Ц-ն իջեց-
նել մէկ մեծ չափս, նշ. Т. սորանից յետոյ
չափել մէջքի ուսի երկարութիւնը Ж և З-ն
և որքան որ ստացւի այդքան վերցնել և
կրծքի ուսի լայնութիւնը Р-ից դէպի Օ-ն.
նշ. П, յետոյ միացնել կոր գծով П, И, Т
և Л. սա կլինի թևի փորուածքը։ З և І գծի

վրայ И տառից աջ կողմ վերցնել կրծքի լայնութիւնը 14 ս. և С-ից՝(օձիքի փորւածքից) քաշել 14-ի վրայ ուղիղ գիծ տանել մէջքի գծից ցած, սա կոչւում է կուրծքի միջի կարի գիծը (Бортъ)։

ԿՈՂՔ (Бочокъ)

Որպէսզի նկարենք կողքը փորւածքի վրայ П-ից դէպի Л վերցնել մէկ մեծ չափս նշ. У, մէջքի գծի վրայ Ц-ից դէպի Ф-ն վերցնել մէկ մեծ չափս նշ. Ч և միացնել У-ի հետ, սորանից յետոյ պէտք է հաշւել մէջքի ծաւալի թիւը. երեխայի համար շորը երբէք չի կարւում խուփ տւած, այլ պէտք է լինի ազատ և թոյլ, որպէսզի երեխան ազատ զգայ իրան, սորա համար վերցրած չափսի վրայ աւելացնում ենք 3 ս.։ իմ վերցրած չափսը ստացւած է 27 ս., ուրեմն աւելացնելով 3 ս. կստացւի 30 ս., Իմ նկարում մէջքի վրայ վերցրած է 8 ս. ուրեմն կրծքի մասը մնում է 22 ս. այս 22 Ч-ից դէպի աջ չափել և ինչքան որ աւելանայ բօրտի գծից դէնը ոչնչացնել հետևեալ ձևով. 33-ի և Ц-ի տարածութիւնը բաժանել մէջ տեղ նշ. Щ. Щ-ից աջ ու ձախ բաժանել աւելորդ մէջքի ծաւալից մնացածը և նշ. А և Б թևի փորւածքի վրայ, բաժանել Т և И. և նշ. Ш. միացնել Ш-ն Ц-ի հետ ուղիղ գծով Щ-ից 25 սանտ ցած

տանել. այս 25 միացնել А և Б-ի հետ նոյնպէս А և В միացնել Ш-ի հետ հաւասարացուցիչ կարի (вытычка) ձևով. իսկ փէշի երկարութեան համար Ч-ից իջեցնել 10 ս. ձախ կողմ աւելացնել 3 ս. և միացնել Ч-ի հետ։

ԼԻՖ ՏԷՕԴՕՐԻ

Այս լիֆը նկարւում է երկու տեսակ. մէկ բնական կօրսետի վրայ հագնելու, միւսը կարճ կորսետի համար. նախ քան կանանց համար լիֆ նկարելը, հարկաւոր է ըմբռնել ամեն մի չափսի նշանակութիւնը, և վերցնելու ձևը, ապա թէ ոչ կարող են մտնել այնպիսի սխալներ, որ ոչ թէ կարող են փչացնել ձևը, այլ չեն կարող մինչև անգամ պատճառը գտնել. երկարութեան բոլոր չափսերը գրւում է ամբողջ, իսկ լայնութեանը՝ կէս, ինչպէս վերևում բացատրեցի երեխայոց համար, նոյնպէս և կանանց համար մէջքը պէտք է շրջապատել երիզով կամ գօտիով. որպէսզի լիֆը գեղեցիկ լինի պէտք է հետևել չափսը ճշտութեամբ վերցնել և յիշել միշտ հիմնական օրէնքները. կուրծքը պէտք է լինի ազատ (свободна), իսկ մէջքը ձիք (обтянута)։

ՉԱՓՍ ՎԵՐՑՆԵԼԸ

1։ Չափս։ Մէջքի երկարութիւնը չափ-

1289-98

ւում է օձիքի բարձրութեան մէջ տեղից մինչև մէջքի ծաւալը. սորա համար սանտիմետրի մէկ ծայրը բռնել օձիքի վրայ ձախ ձեռքով, իսկ աջով տանել ցած մինչև երիզը, որով շրջապատած է մէջքը. կրծքի երկարութիւն չափւում է միևնոյն տեղիցը, այսինքն օձիքի մէջ տեղից. այս տեղից սանտիմետրը թեքել ուսի վրայ, տանել կրծքի վրայով մինչև գօտի միջի գծից (բօրտից) 3—4 սանտ. հեռաւորութեամբ, այս չափը վերցնել հանդարտ և ձիգ, որպէսզի երկար չստացւի, հակառակ դէպքում կպահանջի չափելու (примѣрка) ժամանակ ուսերից բարձրացնել. եթէ այս չափը երկար վերցնել, թևի փորւածքն էլ մեծ կստացւի և ամբողջ լիֆի առաջի մասը վատ կնստի։

ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓՍ.

2. Չափը, այսինքն կրծքի և մէջքի ծաւալը։ Սանտիմետր տանել մէջքի ամենալայն տեղը, անցկացնել թևերի տակը և բերել ուղիղ կրծքի մէջ տեղը։ Հիմնական չափից է ստացւում մէջքի և կրծքի լայնութիւնը և սորա համար պէտք է աշխատել առանց սխալմունքի վերցնել. սանտիմետրը բռնել ուղիղ և թոյլ։

ՄԷՋՔԻ ԾԱՒԱԼԸ

3. Չափը. Սանտիմետրով շրջապատել մէջքը ձիգ, որովհետև շորի վերայ ենք վերցնում.

ԿՈՂՔԻ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆԸ

4. Չափը. Սանտիմետրի մի ծայրը դնել թևի փորւածքի տակը և տանել ուղիղ մինչև գօտի։

Որպէսզի հիմնական չափը չխառնւի միւսների հետ, դնել փակագծերի մէջ. ստացւած թւերը նշանակել հետևեալ ձևով՝

41—48—(48)—30—23.

ՏԷՕԴՕՐԻ ԼԻՖԻ ՄԷՋՔԸ

Նախ քան լիֆ նկարելը պէտք է պատրաստել մեծ և փոքր չափը, այնպէս ինչպէս որ ցոյց տւի մանկական լիֆի համար. ձևի թղթի վրայ վերևում գրել Ա. այստեղից քաշել ուղիղ գիծ դէպի ցած, Ա-ից վերցնել դէպի ցած մէջքի երկարութիւնը մեր օրինակից 41 ս. (նկար 3) 41-ից դէպի Ա-ն վերցնել կողքի երկարութիւն 23 ս. և մէկ մեծ չափս նշանակել Բ-ն։

Այժմ անցնենք լայնութեանը. Ա-ից աջ քաշել գիծ, սա կլինի օձիքի գիծը. Բ-ից ու 41-ից էլ քաշել աջ կողմ գիծ. Բ-ի գի-

200



Նկար 3

ծը կլինի մէջքի լայնութեան գիծը, իսկ 41-ի գիծը կլինի մէջքի ծաւալի գիծը։

Օձիք։ А-ից աջ վերցնել մէկ փոքր չափս և փոքր չափսի կէսը, նշ. В. չպէտք է վերցնել մեծ չափսը ինչպէս մանկական լիֆի վրայ։

ՄԷՋՔԻ ԼԱՅՆՈՒԹԻՒՆԸ

Նախ քան այս չափս նշանակելը, պէտքէ տալ փոքր ինչ բացատրութիւն. կասեմ թէ ինչու համար կանանց լիֆի համար էլ չենք վերցնում առանձին մէջքի լայնութեան չափսը. շատ տարիների փորձառութիւնը ցոյց տուեց, որ ճշտութեամբ վերցրած մէջքի լայնութիւնը հաւասար է հիմնական չափսի 3-րդ մասի յետևի բաշօկի հետ միասին. օր. համար եթէ հիմնական չափսը 48 ս. է, բաժանել 3 մասի և կը ստացուի ամեն մէկը 16 ս., որոնց մէկ մասը մէջքի բաժին կլինի. յետևի բաշօկի (կող) հետ, ուրեմն որպէսզի վերցնենք մէջքի լայ-

նութիւնը, Б-ից աջ 16 ս. և աւելացնել 2 ս. ևս, նշ. Д։ Թևի փորուածքը. 16-ից վեր բարձրացնել մէկ մեծ չափս, նշ. Ж, միացնել 16-ի հետ նախ ուղիղ և յետոյ մի քիչ կոր գծով, $^1/_2$ ս. հեռաւորութեամբ։

Ուսը։ Ж-ն միացնել В-ի հետ օձիքի մօտ կստացուի ուսը։

ՄԷՋՔԻ ԾԱՒԱԼԻ ԼԱՅՆՈՒԹԻՒՆԸ

Անցնել այս կէտին, պէտք է աչքի առաջ ունենալ հետևեալը. մէջքի լայնութիւնը կախուած է մէջքի ծաւալի ստացուած թիւից. այսինքն որքան շատ կլինի ստացուած թիւը, նրա համապատասխան էլ պէտք է վերցնել մէջքի վրայ լայնութիւնը. երբ որ մէջքի ծաւալը ստացւում է 30 ս. մէջքի վրայ, վերցնել . 3 սանտ.

31-ից մինչև 40—4 սանտ.

41 և աւել 5 սանտ.

Իմ վերցրած թիւը 30 սանտիմետր է, ուրեմն մէջքի գծի վրայ վերցնել 3 ս., փորուածքի համար մէջքի մէջ տեղը միշտ վերցնում են 2 ս. սորա համար 41-ից աջ վերցնել 2 ս. նշ. Г. և յետոյ 3 ս. նշ. И. ամբողջ 5 ս. 16 միացնել И-ի հետ ուղիղ գծով, բաժանել մէջ տեղը և նշ. О. О-ից ձախ վերցնել 2 ս. և յետոյ նորից 16, 2 և И-ն միացնել կոր գծով. Г միացնել Б-ի

հետ ուղիղ և տանել մինչև հաւասար-
ւի Ա-ի դէմ և նշ. Կ.։ Ա և Կ-ի մէջ տեղի
տարածութիւնը հաւասար է 1 ս.-ի որը
պէտք է միացնել Ա-ի հետ. Կ-ից իջեցնել
1 ս. և միացնել Բ-ի հետ. վերջացնելով
մէջքը պէտք է նկարել յետևի բաշօկը, որը
անբաժան է նրանից։

ՅԵՏԵԻԻ ԲԱՇՕԿԸ

(Տես նկար 3)

Մէջքի ծաւալի գծի վրայ Ի տառից աջ
վերցնել մէկ փոքր չափս և նշ. Մ., այստե-
ղից վերցնել կողքի լայնութիւնը և նշ. Լ.
իմ օրինակից հաւասար է 6 ս.. այս 6 սան-
տիմետրը չի վերցրած պատահմամբ, այլ
հաշւով է ստացւած, որը բացատրելու եմ
կուրծքը նկարելու ժամանակ։ 16-ից ուղիղ
իջեցնել մէկ և կէս փոքր չափս, նշանակել Յ.
այստեղից աջ վերցնել մէկ փոքր չափս և
նշ. Ր. յետոյ միացնել Ր և 16 կոր գծով,
յետոյ Ր և Լ միացնել նախ ուղիղ և յետոյ
$^1/_2$ սանտիմետր խորութեամբ ծրած գծով։
Ամենադժւարն է կողքի յետևի գիծը, նրա-
նից է կախւած բաշօկի գեղեցկութիւնը։
Օ-ից աջ վերցնել մէկ սանտիմետր և միա-
ցնել Դ-ի հետ կոր գծով, այնպէս, ինչ-
պէս ցոյց է տւած նկարի վերայ, յետոյ 1
և Մ-ն ուղիղ գծով։ Փէշերի լայնութիւնը
41-ից ցած իջեցնել 10 ս. և միացնել Գ

հետ. Ի, Մ և Լ-ից էլ իջեցնել 10 սանտ.
որ նշանակւած է Փ, Ֆ, և Ц.։ Փ-ից աջ
վերցնել 2 ս. և միացնել Ի-ի հետ. Ֆ-ից
էլ ձախ աւելացնել 2 ս. և միացնել Մ-ի
հետ, Ц-ից էլ աւելացնել աջ 3 ս. և միաց-
նել Լ-ի հետ։

ԿՈՒՐԾՔ (передокъ)

Թղթի մէջ տեղ դնել Ա և այստեղից
իջեցնել ուղիղ երկար գիծ, սրա վրայ Ա-ից
իջեցնել կրծքի երկարութիւնը 48 ս. սրա
վերայ քաշել աջ ու ձախ լայնութեամբ
կարող գիծ. սա կլինի մէջքի ծաւալի գիծը։

ՈՒՍ ԵՒ ՕՁԻՔ.

Որպէսզի նկարենք ուս և օձիք, Ա կէ-
տից դէպի ցած պիտի վերցնել 2 մեծ չափս
և նշանակել առաջինը Բ տառով, իսկ երկ-
րորդը Գ, այնուհետև Գ-ի վրայով անցկաց-
նել հատիչ գիծ։ Գ-ից ձախ կողմը վերցնել
դարձեալ երկու մեծ չափս և նշանակել Դ
և միացնել Բ-ի հետ ուղիղ գծով, որը այդ-
տեղ չի վերջանում, այլ կէս փոքրիկ չափ-
սով անցնում է կէտից և նշանակւում Ե
տառով։ Այնուհետև չափւում է մէջքի ու-
սի երկարութիւնը և վերցնելով Ե-ից դէպի
Դ, ամբողջ աւելացածը կարում են և նշա-

նակում Ж տառով։ Ж և Е կէտերի մէջ եղած գիծը ուսի գիծն է։ Որպէսզի օձիքը



Նկար 4

նկարենք, Г-ից աջ վերցնում ենք նախ մեծ և ապա փոքր չափս, որ նշանակում ենք И տառով, որը միացնում ենք Е կէտի հետ նախ ուղիղ և ապա բաւական կորացած գծով, որը ուղիղ մէջ տեղից կէս փոքր չափսով է հեռացած։ И և Е կէտերի մէջ

եղած գիծը բնորոշում է օձիքի փորուածքը

Թեւի փորուածքը. 48-րդ կէտից դէպի А-ի ուղղութեամբ վերցնել կողքի երկարութիւնը 23 ս., որից յետոյ նոյնպէս վերցնել մի մեծ չափս նշանակել Б կէտով, սորա վերայ քաշել մի հատիչ գիծ աջ ու ձախ, որ կոչւում է *թեւի փորուածքի գիծ:*

Б-ից ձախ վերցնել նախ մէկ մեծ չափս, նշանակել б, յետոյ մէկ փոքր չափս և նշանակել а, և այս փոքր չափսը բաժանել մէջտեղից ու նշանակել в, յետոյ а-ից ձախ կողմը վերցնել երկու մեծ չափս նշանակել К և Л., 48-ից ձախ վերցնել $2^1/_2$ մեծ չափս և նշանակել М և միացնել ուղիղ գծով К-ի հետ, К-ից իջեցնել այս գծի վրայ մէկ փոքր չափս, նշանակել Ы և միացնել կոր գծով Ы, в և Ж. սա կլինի թեւի փորուածքը, որը միշտ պէտք է ձեռքով նկարել և առանց քանոնի։ Որպէսզի որոշենք կրծքի լայնութիւնը, հարկաւոր է փոքրիկ բացատրութիւն տալ. եթէ մէջքի լայնութիւնը յետևի բաշկի հետ վերցրած էր հիմնական չափսից մէկ երրորդ մասը՝ 16 ս., հասկանալի է որ կրծքի վերայ առաջին բաշկի հետ կ'ստացուի երկու երրորդ մասը՝ 32 ս.։ Սոյն չափսը պարզելու համար անցնենք առաջին բաշկին։

Մ-ից մէջքի ծաւալի գծի վրայ ձախ

կողմը վերցնել նախ 1 սանտ., յետոյ բաչօկի լայնութիւնը 6 ս. և նշանակել Π. թէ ինչու համար 6 ս. և ոչ աւել կամ ոչ պակաս, այդ բացատրելու եմ մէջքի ծաւալի հաշուի ժամանակ. սորանից յետոյ Κ-ից իջեցնել դէպի Μ մէկ մեծ չափս, նշանակել Η. և միացնել Λ-ի հետ. այս գծի վրայ Η-ից դէպի Λ-ն վերցնել մէկ մեծ չափս, նշանակել C և միացնել Π-ի հետ ուղիղ գծով, յետոյ նորից $^1/_2$ ս. ձախ կողմը մէջտեղը դուրս գալ և նորից միացնել. այս գիծը կանցնի կրծքի գծի վրայով, որտեղ անկիւնում պէտք է նշանակել Ρ. այս Ρ տառը ունի մեծ նշանակութիւն, որովհետև այստեղից է չափւում կրծքի լայնութիւնը, այսինքն հիմնական չափսի երկու երրորդական մաս. և այսպէս Ρ-ից աջ կողմը չափել 32 ս.։ Որովհետև հիմնական չափսը ունենք 48 ս., դուրս գալ մէջքի մասը 16 ս., կրծքի մասը առաջին բաչօկի հետ միասին մնում է 32., սորան հարկաւոր է աւելացնել $^1/_2$ ս., որը նկարելու ժամանակ պակասելու է Η-ի մօտ։ Այսպիսով Ρ-ից վերցնել $32^1/_2$ ս. որ հէնց այդպէս էլ նշանակելու ենք, յետոյ Ι-ից տանել ուղիղ գիծ մինչև $32^1/_2$ կէտը, որից գիծը գնալով հասնում է մէջքի գծից ցած 10—15 ս. (այս գիծը կոչւում է *ցօրտ*) ցած, մէջքի ծաւալի գծի մօտ և նշանակել Υ կէտով։

Երբ որ բօրտի գիծն էլ պատրաստ կլինի, պէտք է նկարել վիտիշկէք՝ Υ-ից վեր բաձրացնել 2 ս. և միացնել Μ-ի հետ ուղիղ գծով, այս գիծի վրայ նկարել վիտիշկէք։ Վիտիշկաների լայնութիւնը կախւած է հիմնական չափսից, իսկ բարձրութիւնը կողքի երկարութիւնից. եթէ հիմնական չափսը 40—44 ս. է, վիտիշկայի լայնութիւնը պէտք է վերցնել 4—2—6 ս.

44 — 48	5 — $7^1/_2$ ս.
48 — 52	6 — 9 »

և այլն.

Այսպիսով դուրս է գալիս, որ երկրորդ վիտիշկան մէկ ու կէս մեծութեամբ աւելի պէտք է լինի առաջնից։

Վիտիշկի բարձրութիւնը սովորաբար բաչօկի բարձրութիւնից 7 ս. պակաս պէտք է լինի։ Աչքի առաջ ունենալով, որ իմ վերցրած օրինակի հիմնական չափսը 48 սանտիմետր է, իսկ կողքի երկարութիւնը 23 ս., առաջի վիտիշկի լայնութիւնը վերցնում ենք 5 ս., իսկ բարձրութիւնը 16 ս., ինչ վերաբերում է երկրորդին, նա վերցնում ենք $7^1/_2$ ս. լայնութեամբ և 16 ս. բարձրութեամբ։ Կարճ կորսետի վրայ լիֆի վիտիշկի բարձրութիւնը պէտք է վերցնել 9 ս. պակաս բաչօկից։ Բօրտից մինչև վիտիշկան եղած տարածութիւն կախւած է մէջքի ծաւալից. եթէ մէջքին վերցրած է

3 ս., կրծքինը բօրտից մինչև վիտիշկան պէտք է վերցնել 4 ս., ուրեմն մէկով աւելի. եթէ մէջքինը 4 ս. է, կրծքինը 5 ս. և այսպէս էլ շարունակել։ Իմ վերցրած օրինակի վրայ մէջքի լայնութիւնը հաւասար է 3 ս., դրա համար էլ բօրտից մինչև վիտիշկան պէտք է վերցնել 4 ս. յետոյ առաջի վիտիշկի լայնութիւնը 5 ս. և նշանակել е. այս 5-ի և е-ի մէջ եղած տարածութիւնը բաժանել մէջ տեղը և նշանակել Щ, որը միացել ուղիղ в-ի հետ օձիքի մօտ. այս գիծը ցոյց է տալիս վիտիշկի ուղղութիւնը. այս գծի վրայ Щ-ից դէպի в-ն բարձրացնել վիտիշկի բարձրութիւնը 16 ս., որովհետև բաշօկի երկարութիւնը ունենք 23 ս., դուրս գալով 7 ս. կմնայ 16 ս. (բաշօկից 7 ս. պակաս)։ Վիտիշկի ձևը պէտք է տալ անպատճառ ձեռքով. վերին մասը պէտք է լինի սրածայր ինչպէս նետի ծայրը, կողքերքը իջեցնելով և կամաց կամաց լայնացնելով մէջ տեղը պէտք է քիչ կոլորացնել, մինչև д—М գիծը. վիտիշկաների մէջ տեղի տարածութիւնը միշտ պէտք է լինի 2 ս., սրա համար էլ երբ որ առաջին վիտիշկան նկարած է, վերցնել е-ից դէպի М-ն 2 ս. և յետոյ երկրորդ վիտիշկի լայնութիւնը $7^1/_2$ ս. և նշանակել Х. Х-ի և 2-ի մէջ եղած տարածութիւնը բաժանել մէջ տեղից և նշանակել Ш. որպէս

զի իմանանք վիտիշկաների վերևի մասի տարածութիւնը. 16-ից ձախ կողմը վերցնել առաջի վիտիշկի լայնութիւնը և $1^1/_2$ սանտ. աւելացնել, որով կստացուի $6^1/_2$ սանտիմետր. և այսպէս, որքան որ կլինի առաջին վիտիշկի լայնութիւնը, նրա վրայ պէտք է աւելացնել $1^1/_2$ ս. և այդքան էլ վերցնել վերին մասի վիտիշկաների մէջ տեղի տարածութիւնը։ Ուրեմն 16-ից վերցնել $6^1/_2$ ս. և նշանակել Ф, Ш-ն և Ф-ն միացնել ուղիղ գծով և սորա վրայ բարձրացնել երկրորդ վիտիշկի բարձրութիւնը 16 ս., յետոյ միացնել Ф-ն 2-ի և Х-ի հետ նոյն ձևով, ինչպէս առաջին վիտիշկան։ Բայց սրա ձևը միքիչ փոխւում է՝ աջ կողմի գիծը ստացւում է աւելի ուղիղ, իսկ ձախ կողմինը մի քիչ թեք. սորա համար էլ, կարելու ժամանակ ձախ կողմինը պէտք է թոյլ բըռնել, որպէս զի թեք աւելորդը մտնի կարի մէջ։

ՄԷՋՔԻ ԾԱՒԱԼԻ ՀԱՇԻՒԸ

Երբ որ վիտիշկէք պատրաստ կլինին, պէտք է վերջացնել կուրծքը (передокъ)։ Իմ տուած օրինակի մէջ մէջքի ծաւալը ունենք 30 ս.. այս 30-ից 3-ը արդէն վերցրինք մէջքի վրայ, 4 էլ բօրտից կրծքի վրայ. մինչև վիտիշկէքը 2 ս., վիտիշկէքի

մէջ տեղը. ընդամեն 9ս., այս 9 ս. դուրս գալով 30-ից մնում է 21 ս., որը պէտք է բաժանել 2 բաչօկի և կրծքի վրայ։ Պէտք է աչքի առաջ ունենանք, որ կուրծքը 3 սանտիմետրով աւելի պէտք է լինի բաչօկներից. ուրեմն դուրս գանք 3 սանտիմետր 21-ից կմնայ 18 ս. 18 : 3=6, որով յետևի և առաջի բաչօկին մնում է 6-ական սանտիմետր, իսկ կրծքին 6 ս. և այն 3 ս., որը վերցրինք 21-ից կուրծքը լայնացնելու համար։ Այսպիսով ստացւում է հետևեալ ընդհանուր հաշիւ՝

Մէջքի լայնութիւնը	3 ս.	
Յետևի բաչօկը	6 »	
Առաջի բաչօկը	6 »	
Լիֆի առաջին մասը	9 »	(6+3=9)
Վիտիշկաների մէջտեղը	2 »	
Բօրտից մինչև վիտիշկան	4 »	
Ընդամենը	30 ս.	

Որպէս զի աւելի պարզ և թեթև լինի, վերցնենք մէջքի ծաւալի թիւը (30), դուրս գանք նրանից 1) մէջքի վրայ վերցրած լայնութիւնը, 2) բորտից մինչև վիտիշկան, 3) վիտիշկաների մէջտեղի տարածութիւնը, 4) 3 սանտիմետր, որ պէտք է կրծքի համար, որպէսզի բաչօկներից լայն լինի և մնացածը բաժանել 3 մասի, որոնցից ամեն մէկը պէտք է հաւասար լինի բաչօկի լայ-

նութեանը մէջքի ծաւալի մէջ և կստացուի՝

30=3+4+2+3+(6×3)։

ԿՈՒՐԾՔ (передокъ)

M տառից դէպի K-ն բարձրացնել մէկ փոքր չափս նշանակել Ч. X-ից՝ վիտիշկից իջեցնել $1^1/_2$ ս. նշանակել Э և միացնել Ч-ի հետ ուղիղ. այս գծի վրայ վիտիշկից՝ Э-ից դէպի Ч-ն վերցնել ստացած թիւը 9 ս. ու միացնել M-ի հետ նախ ուղիղ, յետոյ մէկ սանտիմետր կոր գծով։

ՎԻՏԻՇԿԱՆԵՐԻ ՆԵՐՔԵՒՐ ՄԱՍԸ

Առաջին վիտիշկից՝ Щ-ից իջեցնել 10 ս. և նշանակել O, այստեղից աջ ու ձախ բաժանել հաւասար վիտիշկի լայնութիւն ամեն մի կողմ թողնելով 5 սանտիմետրից $2^1/_2$ ս. և միացնել 4-ի և e-ի հետ ուղիղ գծով։ Վիտիշկաների մէջտեղի տարածութիւնը վերցնել $2^1/_2$ ս., այստեղից երկրորդ վիտիշկի լայնութիւնը $7^1/_2$ սանտիմետր է և այդ միացնել X-ի հետ, և $2^1/_2$ էլ 2-ի հետ։

Աչքերի բաչօկը. M-ից ձախ պէտք է վերցնել նախ մէկ ս. և նշանակել O, յետոյ այն 6 սանտիմետրը, որը ստացւեց իբրև նրա վայ նշանակել П տառով, O միացնել H-ի

հետ փորուածքի մօտ նախ ուղիղ, յետոյ կէս սանտիմետր կորացած գծով։ Որպէս զի առջևի և յետևի բաչօկները մէկ բարձրութիւն ունենան, պէտք է չափել յետևի բաչօկի աջ կողմի մասը, Л և П-ի մէջ եղած տարածութիւնը և որքան կստացուի, այդքան էլ վերցնել П-ից մինչև С և նշանակել Т, իսկ այս Т-ն միացնել Н-ի հետ և կստացուի բաչօկի փորուածքը։

Որպէսզի նկարենք փեշի երկարութիւնը, կրծքի վրայ 9-ից պէտք է իջեցնել 10 ս. ձախ և աւելացնել 3 ս. ու միացնել 9-ի հետ. О և П-ից իջեցնել 10 ս. աջ ու ձախ աւելացնել 3-ական սանտ. և միացնել О և П-ի հետ. այս 3 սանտ. մշտական չէ, այլ կախուած է աղջիկների լայնութիւնից, այնպէս որ լինում է փոփոխութիւն, որ կախումն ունի կազմուածքից։

ՄԻ ՔԱՆԻ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Ես կուզէի մի քանի օգտաւէտ խորհուրդներ տալ այն անձանց, որոնք սովորած են գրքի վրայ սովորելու, որ աւելի դժուար է քան գործնականապէս վարժուելիս, ուստի հրաւիրում եմ ուշադրութիւն դարձնել հետևեալ առածներիս վրայ.

Չափս վերցնելու մէջ անփորձները եթէ ուզում են, որ լիքը գեղեցիկ և օրինաւոր կերպով նստի, շատ պէտք է վարժուեն, որպէս զի չափը լինի ճիշտ և պահանջելի մեծութեամբ վերցրած, մանաւանդ կրծքի երկարութիւնը, որի չափելու ժամանակ միշտ կարելի է սխալուել և երկար վերցնել, որից կազդեցանայ կրծ-

քի կամ առաջքի (передокъ) մասը։ Սանտիմետրը պէտք է բռնել ուղիղ և ձգած. բաչօկը պէտք է վերցնել քիչ երկար, այնպէս որ հասնի մինչև գօտիկի վերջին ծայրը։ Յետևի բաչօկը վերևի մասում պէտք է նկարել ճշտութեամբ կորացած, հակառակ դէպքում մէջքը կստացուի անճիշտ։

Բաչօկների լայնութեան համար ես խորհուրդ եմ տալիս հետևեալը, լիքը գեղեցիկ է նստում, երբ յետեւի բաչօկը առաջինից քիչ նեղ է վերցնւում, ուստի երբ բաչօկների և կրծքի (передокъ) մասերը հաւասար չեն ստացւում, յետևի բաչօկը վերցնել 1 կամ $^1/_2$ սանտիմետրով պակաս և աւելացածը բաժանել բաչօկի և կրծքի միջև, այսինքն 1 սանտիմետրը հաւասար կիսել և ամեն մի կէսը աւելացնել բաչօկին և կրծքին, կամ եթէ մնում է 2 սանտիմետր, $^1/_2$ ս. աւելացնել առջևի բաչօկին, իսկ $^1/_2$ ս. կրծքին, այդպիսի դէպքում ոչինչ վնաս չկայ։

Մէջքի ծաւալը վերցնել ձիգ և չափսաթղթերը (выкройки) ձևելի կտորի վրայ դարսելու ժամանակ ուշադրութիւն դարձնել, որ ձևելի կտորի թելերի ուղղութեամբ դրած լինի մէջքի ծաւալի գծի ուղղութիւնը, ինչպէս նաև բաչօկների և մէջքի վերաբերմամբ պէտք է ընդունել նոյն օրէնքը. կուրծքը ձևելիս ուղիղ գիծը պէտք է լինի բօրտի ուղղութեամբ։ Լիքի բոլոր մասերը ձևւում են ասատառից, որը ծալած պէտք է լինի երկու տակ և ամրացւած գնդասեղներով, որի շուրջը անց են կացնում կտրիչ (рѣзецъ) գործիքով և կտրելու ժամանակ կտրիչի սղմածից թողնել երկու սանտիմետր լայնութիւն աւելի կտոր, իբրև կարի բաժին, օձիքի և թևի փորուածքին աւելացնել միայն 1 սանտ., ուսերին և բօրտին աւելացնել 3 ս. սորանից յետոյ կտրիչի տեղ քոքել սեղանի վրայ և ամեն տեղ թել անցկացնել, կպցնել իրար մէջքի գծից դէպի վեր և յետոյ ներքևի մասը. այնպէս որ մէջքի ծաւալի ամ-

բողջ գիծը հաւասար լինի. վիտիչկեքը քոքել վերևի ծայրից՝ բօրտի կողմից. երկրորդ վիտիչկան պահանջում է առանձին ուշադրութիւն, որովհետև նրա աջ կողմի գիծը ուղիղ է, իսկ ձախը թեք է (косая), սորա համար քոքելու ժամանակ ձախ կողմը բռնել թոյլ, իսկ աջ կողմը ձիգ, աւելորդը պէտք է կարի մէջ մտցնել (посадка)։ Կուրծքի և առաջի բաչօկի քոքելու ժամանակ, բաչօկը ձգել, իսկ կուրծքը բռնել թոյլ։ Մէջքի և յետևի բաչօկի քոքելու ժամանակ բաչօկի վերևի մասը բռնել ձիգ, իսկ մէջքի մասը թոյլ, ուսերը քոքելու ժամանակ էլ կրծքի կողմը ձգել, իսկ մէջքի կողմը բռնել թոյլ. եթէ այս բոլորը ճշտութեամբ կատարեն, լիֆը շատ լաւ նստած կլինի և ոչ մի ուղղումն չի պահանջի։



Նկար 5

ԼԻՖ ԿԱՐՃ ԿՕՐՍԷՏԻ ՎՐԱՅ

Մէջքը նկարւում է համարեա միևնոյն տեսակ, միայն փոխւում է այնքանով, որ դարձեալ հիմնական չափի երրորդ մասը՝ 16 ս. վերցնել Б-ից աջ կողմը և աւելացնել 2 ս. այստեղից ձախ կողմը վերցնել փոքը չափս և նշանակել Д. 23-ից էլ վերցնել և 41-ից էլ այդքան Ц+2 նշանակել П և Л. և միացնել ուղիղ գծով 2, П և Л, յետոյ Д-ից իջեցնել մէկ

փոքը և կէս նշանակել з, այստեղից աջ կողմ վերցնել փոքը չափս նշանակել Р.. Д և 2 ս. բաժանել մէջ տեղը և նշանակել а, և միացնել Р-ի հետ կոր գծով. Л-ից ձախ վերցնել 5 ս. բաչօկի լայնութիւն և միացնել а-ի հետ վերևից մինչև о կոր, իսկ յետոյ ուղիղ նշանակել Н. իսկ մնացած բոլորը նկարել առաջին լիֆի նման։

ԿՈՒՐԾՔԸ (Передокъ)



Նկար 6

Կուրծքը պէտք նկարել միևնոյն տեսակ, միայն փոխւում է այսքանով. 48-ից

իջեցնել փոքր չափս և նշանակել Э. М-ից դէպի К վերցնել 1 սանտ. նշանակել О, և միացնել Ы հետ նախ ուղիղ և յետոյ 1 սանտ. թեքած, յետոյ О-ից դէպի Э վերցնել կրծքի մասը $9^1/_2$ սանտ. ($6^1/_2+3=9^1/_2$ ս.) այս $9^1/_2$-ը միացնել 16-ի վիտիշկի վերի ծայրին այնպէս, ինչպէս ցոյց է տուած նկարի վրայ։ Կրծքի լայնութիւնը վերցնելուց յետոյ, որքան որ մնում է մինչև առաջին վիտիշկան 2-ի մօտ՝ երկրորդ վիտիշկի լայնութիւնն է. որքան շատ լինի երկրորդ վիտիշկի լայնութիւնը, այնքան գեղեցիկ և արձակ կլինի կուրծքը։ Վիտիշկի ներքևի մասը աւելի լայն պէտք է լինի 2 կամ $2^1/_2$ սանտիմետրով. իմ տուած օրինակից երկրորդ վիտիշկի լայնութիւնը ստացուած է $13^1/_2$ ս., ուրեմն ներքևի լայնութիւն վերցնել $15^1/_2$ ս.։

ԼԻՖ ՄԷԿ ՎԻՏԻՇԿՈՎ

Այս լիֆը գործ է ածւում ինչպէս թեթև տօնական (бальный), այնպէս էլ մահուդէ ծանր հագուստի համար։ Այս լիֆը կարելի է գործ ածել չորս տեսակ։ 1) կուրծքը ծածկած, 2) դարձեալ ծածկուած- պլաստրոնով, 3) կիսատօնական (полубальный) կուրծքը ծածկած և 4) կիսատօնական կուրծքը բաց պլաստրոնով։ Պլաստրոնով լիֆը գեղեցիկ է զոլ կամ շերտանման կտորից։ Այս լիֆի մէջք և բաչօկը



Նկար 7

նկարում է միևնոյն տեսակ, ինչպէս կարճ կօրսէտի համար բացատրեցի կուրծքի մասը։ Բօրտի գծից մէջքի ծաւալի գծի վրայ դէպի М վերցնել 4 ս. վիտիշկի և բօրտի մէջտեղի տարածութիւնը այն դէպքում, երբ մէջքի ծաւալը 30 ս. է, յետոյ 4-ից երկու վիտիշկի լայնութիւնը միասին. եթէ առաջին վիտիշկի լայնութիւնը 5 ս. է հիմնական չափսի հաշուով և երրորդինը

$7^1/_2$ ս., այն ժամանակ այս մէկ վիտիշկի լայնութիւնը կլինի $12^1/_2$ սանտ. և այս պէտք է բաժանել մէջտեղը, նշանակել Ш ու միացնել в-ի հետ օձիքի մօտ ուղիղ գծով. այս գիծը ցոյց է տալիս վիտիշկի ուղղութիւնը, բօրտից մինչև վիտիշկան եղած տարածութիւնը փոխւում է մէջքի ծաւալի թւից. Ш-ից դէպի в բարձրացնել վիտիշկի երկարութիւնը, որ հաւասար է 16 ս.-ի, այս 16-ը միացնել 4-ի և $12^1/_2$-ի հետ, թէ ինչ ձևով դժւար է բացատրել, աւելի լաւ է նայել նկարին և այնպէս նկարել ձևիշով։ Վիտիշկի աջ կողմը չափել 16-ից մինչև 4-ը և այդքան էլ վերցնել ձախ կողմը աւելացնել $1^1/_2$ սանտ. և նշանակել Э. որպէսզի վիտիշկի ներքևի մասը նկարենք, Д-ից իջեցնել 10 ս., այստեղից ձախ վերցնել նշանակել Л, յետոյ Л-ից ամբողջ վիտիշկի լայնութիւնը $12^1/_2$ սանտ. և միացնել 4-ի և $12^1/_2$ հետ.։ Մէջքի հաշիւը մնում է նոյնը, միայն կրծքին (передокъ) պէտք է աւելացնել այն 2 սանտիմետր, որ կայ երկու վիտիշկի մէջտեղը, այնպէս որ կրծքինը ստացւում է $11^1/_2$ սանտիմետր ($6^1/_2+3+2=11^1/_2$.)։ Եթէ ուզում ենք պլաստոնը առանձին կտրել, в-ից ձախ կողմը ուսի վրայ, վերցնել 2 սանտիմետր և միացնել 16-ի հետ վիտիշկին և ահա այստեղից կըտրել առանձին կուրծքը այսինքն պլաստոնը 3-ից 16-ի և 4-ի վրայով։

ՏՕՆԱԿԱՆ (бальный) ՀԱԳՈՒՍՏԸ ԿԻՍԱԲԱՑ (декольте)



Նկար 8

Այս լիֆը վերցրած է յայտնի Վօրտից (Պարիզում նշանաւոր ֆիրմա)։ Այս ձևի փորւածքը (декольте) որքան էլ մեծ լինի և կուրծքը բաց, ուսերից երբէք չի իջնիլ, և միշտ մնում է կպած իր տեղը մինչև անգամ պարելու ժամանակ. այս դէկոլտէն

նստում է շատ գեղեցիկ։ Այս լիֆի կուրծքը բաղկացած է երկու կտորից՝ պլաստոն և առաջք։ Չափսը վերցնել միևնոյն տեսակ.

41—48—(48)—30—23.

Սոյն նկարը ջոկւում է միւս լիֆերից միայն ուսերի երկարացումով։ Մէջքի գծի լայնութեան վրայով 3-ի տեղը վերցնել 4 ս., ուրեմն մէկով աւելի և նշանակել И։ Այս բանը նրա համար է, որ տօնական (бальный) լիֆը կոճկւում է մեծ մասամբ յետևում բոլոր կազմւածքի համար. ուսերը պէտք է լինեն շատ նեղ՝ 2—3 սանտ. Ж տառից երկարացնել ուսը 3 ս. և նշանակել Ю. և միացնել Д-ի հետ կոր գծով. Б-ից իջեցնել փոքր չափս և նշանակել б, ու միացնել կոր գծով Ж-ի հետ։ Դեկոլտէի փորւածքի ձևը կախւած է մօդայից և ցանկութիւնից, բայց ամենագեղեցիկն է խիստ ոլորած փորւածքը։ Մէջքի հաշիւը և փէշերը միևնոյն են։ Կուրծքը նկարւում է միևնոյն տեսակ ինչպէս նկարեցինք մէկ վիտիշկով լիֆը, զանազանութիւնը նրանում է, որ բօրտից մինչև վիտիշկան 4-ի տեղը պէտք է վերցնել $2^1/_2$ սանտ., հաշւել այսպէս՝ մէջքին 4 ս., պլաստրոնը $2^1/_2$, կրծքի վրայ աւելորդ 3 ս. և 2 ս. վիտիշկէքի մէջտեղին. բոլորը $11^1/_2$ սանտ., որը դուրս դալով 30-ից կմնայ $18^1/_2$ սանտ.. որանից $5^1/_2$ յետևի բաշօկին, $6^1/_2$ առաջի

բաշօկին ու $6^1/_2$ կրծքին։ Վիտիշկի ներքի մասը գնում է ուղիղ իր լայնութեամբ. բօրտից՝ д-ից իջեցնել 10 ս. այս 10-ից ձախ վերցնել $2^1/_2$ ս. և յետոյ ամբողջ երկու վիտիշկի լայնութիւնը, և այնպէս միացնել վիտիշկան։ Մեծ փորւածքով դեկոլտէ ձևելու համար Д-ից՝ ուսի անկիւնից ձախ աւելացնել մէկ մեծ չափս և նշ. е, բաժանել մէջտեղը նշանակել Ж, այստեղից ցած իջեցնել մէկ փոքր չափս և նշանակել з, ու միացնել Ж-ի հետ, Ж-ից վերցնել դէպի з ուսի լայնութիւնը նշանակել г. К և в տարածութիւնը բաժանել մէջտեղը և նշանակել У, յետոյ միացնել փորւածքը г, У և Ы, բօրտի գծի վրայ $32^1/_2$-ից բարձրացնել 2 ս. և միացնել Ж-ի հետ կուրծքի փորւածքը այնպէս, ինչպէս նը-



Նկար 9

կարի վրայ է։ Պլաստրոնը նկարելու համար Х-ից վերցնել երկու կողմն էլ կէս սանտիմետր և միացնել 16-ին վիտիշկի ձևով։ Այս կատարւում է նրա համար, որ կրծքի փորւածքը կպած լինի։ Պլաստրոնը կտրել $2^1/_2$ ս. 16-ի վրայով։

Դեկոլտէի փորուածքը լինում է, զանազան տեսակ և այդ կախուած է ճաշակից ու լինում է ոլորաձև, չորս անկիւնանի և սրբատաձև։

ԵՐԵՔ ԲԱՋՈԿ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՆԱՅԻ ԼԻՓԸ



Նկար 10

Յաճախ պատահում են կազմուածքներ, որոնց մէջքի ծաւալը համեմատած հիմնական չափսի հետ շատ է։ Այսպիսի դէպքում աւելի յարմար է լիֆը նկարել երեք բաջոկով, որովհետև լայն բաջոկը՝ 12—14 ս. ձգելու ժամանակ լաւ չի նստում և ծալքեր են սոացւում (складки) և դժուար է ուղղել. վերցնում ենք օրին. համար հետևեալ չափսերը։

41—54—(63)—43—21

Մէջքի հաշիւը շատ հեշտ է. ծալել բոլորը միասին, այսինքն 5 ս. մէջքի վերայ, 6 կրծքին, բօրտից մինչև վիտիշկան, վիտիշկաների մէջտեղը 2 ս. և կրծքին աւելացրած 3 ս., բոլոր 16 սանտ. դուրս գալ մէջքի ծաւալից և մնացածը բաժանել ոչ թէ 3 մասի, ինչպէս երկու բաջոկանի լիֆի համար, այլ 4 մասի, յետևի բաջոկը կարելի է 1 կամ ½ սանտ. պակաս վերցնել, իսկ մնացած երեք մասը հաւասար. 16 հանենք 43-ից կմնայ 27 ս., 6 սանտ. յետևի բաջոկին, իսկ մնացած 21-ից կստացուի 7—7, երկու բաջոկին, 7 էլ կրծքին, աւելացնելով 3 կստացուի 10 ս.։ Э-ից դէպի М վերցնել 10 ս., յետոյ 2 ս., այս 2-ը բաժանել Н և в. նշանակել Ш ու միացնել Ю-ի հետ ուղիղ գծով, յետոյ Ш-ն միացնել 10-ի և 2-ի հետ, սորանից յետոյ 2-ից ձախ վերցնել 7 ս.՝ առաջին բաջոկի լայնութիւնը. և այդ 7 միացնել Н-ի հետ՝ փորուածքին, երկրորդ բաջոկը նկարել այնպէս ինչպէս երկու բաջոկանի լիֆի առաջին բաջոկը, О-ից վերցնել 7 ս. և միացնել С-ի հետ։ Բօրտից մինչև վիտիշկան եղած տարածութիւնը վերցնել միևնոյն տեսակ, այսինքն 1 ս. աւելի մէջքից, ներկայ օրինակից հաւասար է 6 սանտիմետրի։ Այն տեսակ կազմուածքներ, որոնց հիմնական չափսը քիչ է, իսկ մէջքի ծաւալը շատ, նրանց համար վիտիշկի հաշիւը փոխւում է, օրինակի համար, եթէ հիմնական չափսը 63 է օրէնքով առաջին վիտիշկի լայնութիւնը պէտք է լինի 8 ս., բայց վերցնում ենք 3-վ պակաս՝ 5 ս. երկրորդ վիտիշկան 7½, եթէ ուշադրութեամբ նայենք նկարին,

աչքի է ընկնում, որ չնայած երեք բաչօկի և պակաս նեղ վերցրած վիտիչկէքի մէջքի ստացած թիւը հազիւ կարող են տեղաւորուել կուրծքը և մէկ բաչօկ, մինչև M տառը, իսկ թողնել, որ M-ից անցնի՝ չի կարելի։ Երբեմն պատահում է որ բաչօկն



Նկար 11

ու առաջքը չեն տեղաւորուում մինչև M, այդ դէպքում պէտք է բօրտի գիծը առաջ տանել աջ կողմը, կուրծքի լայնութեան գծի վրայ աւելացնել 1—2 սանտ., նայած թէ որքան է պակասում և նորից քաշել И-ից բօրտի գիծը. վիտիչկէքի լայնու-

թիւնը պակաս է վերցրած նրա համար, որ մէջքը հաստ է, և այդ դէպքում առաջքն և բաչօկը չի տեղաւորի ինչպէս վերևում ասացի։

Թէ որ պատուէր տուողը մեծ փոր ունէ, այդ դէպքում վիտիչկէքի ներքևի մասը նեղացնել, ինչպէս ցոյց է տուած նկարի վրայ ու բօրտից էլ լայն թողնել ներքևում, մէջքի գծից։ Կազմուածքը մեծ փորով, նեղ կուրծքով և հաստ մէջքով եղած դէպքում ստացւում են այսպիսի թուեր.

40 – 52 (53)—46—21.

Այսպիսի կազմուածքի համար հարկաւոր կլինի բօրտի գիծը լայնացնել, ինչպէս վերևում բացատրեցի. ստացած թւից կուրծքի լայնութիւնը աւելացնել 1 կամ 2 սանտ., ապա թէ ոչ մէջքի հաշիւը այնքան շատ է, որ չի տեղաւորի կրծքի վրայ։

ԼԻՑ ՓՈՔՐԱՀԱՍԱԿ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նկարը կազմւում է հետևեալ ձևով
37—41—(39)—29—19

Զափս վերցնելը, մէջքն ու կուրծքը նկարելը կատարւում է ճիշտ այնպէս, ինչպէս սովորական կանացի լիֆինը, երկու բաչօկանի, կրծքի մասը փոխւում է այսքան, նկարել միայն մէկ վիտիչկա, բօրտից մինչև վիտիչկան վերցնել 6 ս. այնպիսի

դէպքում, երբ մէջքի ծաւալը հասնում է մինչև 30 ս., իսկ երբ աւելի ստացւի, վերցնել 7 ս.։



Նկար 12

Նկար 13

Վիտիշկի լայնութիւնը. երբ հիմնական չափը մինչև 40 ս. է հասնում, վիտիշկի լայնութիւնը վերցնել 4 ս., 41—43 եղած դէպքում վերցնել 5 սանտ., թէև այսպիսի չափս փոքրահասակների մէջ քիչ է պատահում, այն էլ արդէն լինում է կանացի կազմուածք։

Վիտիշկէն նկարել դարձեալ բաշոկի

բարձրութիւնից 7 ս. պակաս, առաջը բաշոկից առանձնացնել թեւի փորուածքից, ինչպէս մանկական լիֆը ձևելիս, դորա համար էլ e-ից մէջքի ծաւալի գծի վրայ ձախ կողմը վերցնել առաջքի լայնութիւնը և նշանակել Ы, М-ից ձախ վերցնել մէկ մեծ չափս և նշանակել П. այստեղից աջ վերցնել բաշոկի լայնութիւնը և նշանակել О, իսկ յետոյ О և Ы մէջ եղած տարածութիւնը պէտք է բաժանել մէջտեղը և նշանակել Ю, որը միացնում ենք Д-ի հետ ուսի վրայ, ինչպէս այդ ցոյց է տուած նկարի վրայ։ Ю կէտից աջ և ձախ չափւում է վիտիշկանների չափը, որը վերջանում է փորուածքի վրայ Ш կէտում։ Փէշերի լայնութիւնը աւելացնել 2 ս. կրծքին և բաշոկին, իսկ մէջքին 1 սանտ. ու միացնել ինչպէս միւս լիֆերին։

ՎԵՆՆԱՅԵԱՆ ԲԼՈՒԶԸ (Вѣнская блузка)

Բլուզ ձևելու համար պէտք է վերցնել միևնոյն չափսերը, այսինքն՝

41—48—(48)—30—23.

Մէջքը չի բաժանւում բաշոկից, այլ նկարում է միասին, դորա համար էլ հարկաւոր է բացատրել մէջքի ծաւալը և թեւի փորուածքը։

Որովհետև հիմնական չափը մնում է

միևնոյն, վերցնել մէջքի երկարութիւնը 41 ս. յետոյ կողքի երկարութիւնը 23 սանտիմետր և մէկ մեծ չափս, Բ-ից աջ պէտք է վերցնել մէջքի լայնութիւնը 16 ս. և աւելացնել 2 սանտիմետր, 16-ից իջեցնել մէկ փոքր չափս և կէս ու նշ. Ֆ։ Այստեղից աջ վերցնել մէկ փոքր չափս և նշանակել Ր, 16-ից վեր բարձրացնել մէկ մեծ չափս և նշանակել Ж. Л-ից աջ վերցնել մէկ ու կէս փոքր չափս և նշանակել Ш ու միացնել Ж-ի հետ։ Մէջքի ծաւալը, ինչպէս նաև ետևի բաշօկը առանձին չեն հաշուում, այլ վերցնում են մէջքի ծաւալի կէսը։ Որովհետև իմ օրինակում մէջքի ծաւալը հաւասար է 30 սանտիմետրի, ուրեմն մէջքին և ետևի բաշօկին ընկնում է կէսը՝ 15 ս., որը մենք նշանակել ենք П տառով, որ միացնում ենք Р կէտի հետ փորուածքի մօտ նախ ուղիղ և ապա $^1/_2$ ս. կոր գծերով։ Սորանից յետոյ թևի փորուածքը Ж կէտից միացնել 16-ի հետ և իջեցնել մինչև 23-ը С-ի մօտ. Г կէտը



Նկար 14

միացնել Б-ին և տանել մինչև որ հաւասարուի А-ին և նշանակել К-ը, որը իջեցնելով մէկ սանտիմետրով միացնել В-ին։



Նկար 15

Կուրծք. Г-ից աջ պէտք է վերցնել մէկ մեծ չափս և մէկ ու կէս փոքր չափս և նշանակել И, յետոյ Н-ից դէպի Л վերցնել մէկ փոքր չափս և նշանակել Ц, М-ից բարձրացնել մէկ փոքր չափս և նշանակել Ч. ու միացնել Ц-ի հետ նախ ուղիղ, յետոյ կէս սանտ. աւելացնելով ձախ կողմից. Р-ից չափել կրծքի այնութիւնը $32^1/_2$ ս.՝

հիմնական չափից ստացուածը, աւելացնել փոքր չափսի կէսը և նշանակել Ш. И-ից Ш-ի վրայով քաշել ուղիղ գիծ և տանել մէջքի գծից 10 սանտ. ցած, 48-ից իջեցնել մէկ փոքր չափս և նշանակել Щ, իսկ յետոյ միացնել Ч, Щ և 10-ը։ Մնացածը նըկարել այնպէս, ինչպէս Տէօդորի լիֆի առաջքը, միայն առանց վիտիշկի և թևի փորուածք ստանալու համար միացնել Ж, в, Н և Ц կէտերը։

ՖԻԳԱՐՕ ԵՒ ԲԱԼԵՕՐՕ



Նկար 16

Ֆիգարօ կարելի է ձևել մինչև մէջքի գիծը (до таліи) թոյլ, այնպէս, որ կիսով

չափ կպած լինի մէջքին, նկարել ինչպէս կանանց երկու բաչօկանի լիֆը մէկ վիտիշկով, յետոյ առաջի բաչօկը կիսել և մէկ կէսը աւելացնել կրծքին, իսկ միւս կէսը մէջքի բաչօկին, այնպէս որ առաջքը կորել



Նկար 17

Я և Ю-ի վրայով, սրա համար հարկաւոր է Н-ից դէպի Л վերցնել մէկ փոքր չափս և նշանակել Я, վիտիշկից էլ վերցնել կրծքի լայնութիւնը, աւելացնե, բաչօկի կէսը և նշանակել Ю և միացնել Я-ի հետ, թևի փորուածքը նկարել այնպէս, ինչպէս նկարի

վրայ է. վիտիշկան նկարել մէկ, կուրծքը կարելի է ծածկած անել (двубортный) և բաց (однобортный)։ Ֆիգարօն և բալեօրօն զանազանւում են նրանով, որ ֆիգարօն կարւում է մինչև մէջքը, մինչև անգամ առջի փէշը երկարացրած, իսկ բալէրօն կարւում է կարճ մէջքից վեր։

Մէջքը նկարւում է այնպէս, ինչպէս կօրսետի լիֆի մէջքը երբ արդէն յետևի բաչօկը պատրաստ կլինի, Р-ից աջ երկարացնել գիծը և այնտեղից վերցնել առաջի բաչօկի կէսը, այսինքն $3^1/_2$ ս., այստեղից իջեցնել 1 սանտ. նշանակել С, ու միացնել Р-ի հետ, մէջքի գծի վրայ Л-ից աջ վերցնել $3^1/_2$ սանտ. և միացնել С-ի հետ, միացածը այնքան պարզ է ցոյց տւած նկարի վրայ, որ աւելորդ եմ գտնում բացատրել։

ՎԵՐԱՐԿՈՒ (Жакетъ)

Չափը վերցնել միևնոյն ձևով ինչպէս լիֆի չափը։ Ենթադրենք որ ստացւեց միևնոյն թւերը, օրինակի համար՝

41—48—(48)—30—23.

Մէջքը։ Վերարկուի մէջքը շատ մեծ նմանութիւն ունի լիֆի մէջքի նկարին և նրա համար էլ ես միայն ցոյց կտամ այն կետերը, որտեղ փոխւում են։ Որպէսզի աւելի գեղեցիկ երեւայ, ուստի գիծը քիչ երկարացնել, սորա համար Ж-ից աջ վերցնել 1 սանտ. և միացնել Д-ի հետ կոր գծով, մէջքի ծաւալի հաշիւը փոխւում է այսպէս, որ երբ մէջքի ծաւալը ունենք 30 ս., լիֆի համար մէջքի վրայ վերցնում ենք 3 սանտ., իսկ վերարկուի համար պէտք է վերցնել 4 ս., այսինքն մէկով աւելի, նրա համար, որ մէջքը արձակ լինի ու դէս ու դէնը չծռւի։ Սորանից յետոյ Г-ից ցած իջեցնել 10 սանտ. էլի Г-ից իջեցնել 2 ս. և նշանակել б. 4-ից իջեցնել 1 սանտ. և նշանակել в. և միացնել б-ի հետ, այս կլինի նորից ստացւած մէջքի գիծը։ в-ից իջեցնել 10 ս. աջ կողմը և աւելացնել 2 սանտ. ու միացնել в-ի հետ, սա կլինի փէշերկարութիւնը։ Մէջքի լայնութիւնը վերցնել հիմնական չափի երրորդ մասը, այժմ ունենք 48 ս., ուրեմն կստացւի 16 ս. և նշանակել Д. աւելացնել աջ կողմ 2 ս., այս 2-ից ուղիղ իջեցնել մէկ մեծ չափս և նշանակել З, այստեղից աջ վերցնել մէկ փոքր չափս, նշանակել Р.



Նկար 18

ու միացնել 2-ի հետ կոր գծով. М-ից իջեցնել 1 սանտ և միացնել Л-ի հետ, որ լինի մէջքի գիծը. նստացածը նոյնն է, ինչպէս լիֆի նկարը։

ԿՈՒՐԾՔ (передокъ)



Նկար 19

Ժակետակի կուրծքը նկարում է բնական վերցրած չափից մէջքի ծաւալը 6 սանտ. աւելի, կրծքի երկարութիւնը, կողքի բարձրութիւը, օձիքի և ուսի գիծը նոյնն են ինչպէս լիֆի համար ու փոխւում է այս-

քանով. ուսի գծի վրայ в-ից աջ վերցնել մէկ փոքր չափ, նշանակել е, Г-ից աջ օձիքի գծի վրայ վերցնել 2 մեծ չափս նշանակել И, և միացնել е-ի հետ փոքր չափի խորութեամբ։ И-ից ձախ վերցնել 1 սանտ և միացնել բօրտի գծին վիտիշկի նման. այս հարկաւոր է միշտ ժակետակի վրայ։

Թևի փորւածքը։ Б-ից ձախ վերցնել 3 մեծ չափս նշանակել а, К և Л. К-ից քաշել ցած ուղիղ գիծ մինչև մէջքի ծաւալի գիծը և նշանակել М. К-ից այս գծի վրայ իջեցնել մէկ մեծ չափս նշանակել Н. այստեղից վեր բարձրացնել փոքր չափի կէսը նշանակել Ц և միացնել կոր գծով а և Ж-ի հետ, որ կլինի թևի փորւածքը։ Р-ից չափել կրծքի լայնութիւնը հիմնական չափից երկու երրորդական մասը 32 սանտ., լիֆի համար աւելացնում ենք ½ սանտ., իսկ ժակետին պէտք է աւելացնել 1 սանտ., այնպէս որ կրծքի լայնութիւնը ստացւի 33 սանտիմետր։ И-ից 33-ի վրայ քաշել ուղիղ բօրտի գիծը, տանել մէջքի գծից 15—20 սանտ. ցածը, մէջքի գիծը նշանակել У։ Վերարկուն նկարւում է միշտ մէկ վիտիշկով, բօրտից մինչև վիտիշկան նախ վերցնել ստացած թիւը 5 ս. իսկ մէջքին վերցրել ենք 4 ս., ուրեմն մէկով աւելի. կրծքին կստացւի 5 ս.. յետոյ աւելացնել 6 ս., բայց

այս 6-ը չի մտնում [illegible] ծաւալի հաշուի մէջ, որովհետև ինչպէս վերևում էլ ասացի, վերարկուն պէտք է թոյլ լինի 6 սանտիմետրով, ուրեմն Y-ից վերցնել 5+6, ընդամենը 11 ս. և նշանակել C ու միացնել B-ի հետ տանել մէջքի գծից 15-20 ս. ցած։ Վիտիշկի բարձրութիւնը ինչպէս լիֆինը վերցնել 7 ս. պակաս բաշոկից. օրինակ՝ ունենք 23 ս., վիտիշկի բարձրութիւնը կստացվի 16 ս.։ Այժմ վիտիշկի լայնութիւնը տեսնենք. վերևում ասած է որ ընդհանուր օրէնքով լիֆի համար երբ հիմնական չափը 48 սանտ. է առաջի վիտիշկի լայնութիւնը լինում է 5 սանտ., իսկ վերարկուի համար պէտք է վերցնել առաջի վիտիշկի լայնութիւնը և աւելացնել 1 սանտ., այսպէս C-ից ձախ վերցնել 6 սանտ. նշանակել Э և միացնել 16-ի հետ, ինչպէս ցոյց է տուած նկարի վրայ, յետոյ C-ից աջ վերցնել ½ սանտ. և նորից միացնել 16-ի հետ, C-ից իջեցնել 10 կամ 15 սանտ., այստեղից ձախ 6 սանտիմետր և միացնել Э-ի հետ։

Բաշոկները նկարել մէկ լայնութեամբ. վերցնենք այսպէս մէջքի վրայ 4 ս., բօրտից մինչև վիտիշկան 5 ս. և այն 3 սանտ., որ միշտ վերցնում ենք կրծքի համար, հաշուել միասին, 4+5+3=12. դուրս, գալով մէջքի ծաւալից՝ 30-ից, կմնայ 18 ս.. այս

18-ը բաժանել 3 հաւասար մասի. 2 բաշոկի և կուրծքի վրայ. ուրեմն կստացվի այսպէս.

Մէջքի լայնութիւնը	4	սանտ.
Բօրտից մինչ վիտիշկան	5	»
Յետևի բաշոկ	6	»
Առաջի բաշոկ	6	»
Կրծքի վրայ	9	»
Ընդամենը	30	սանտ.

Երբ որ կրծքի լայնութիւնը հաշուած է, M-ից վեր բարձրացնել մէկ փոքր չափ նշանակել T. և միացնել Э-ի հետ. Э-ից դէպի T վերցնել կրծքի մասը 9 ս. և միացնել Ц-ի հետ նախ ուղիղ, յետոյ ½ ս. կոր գծով. փեշի երկարութիւնը նկարել այնպէս ինչպէս լիֆի համար։

Թ Ե Ի

Կանանց զգեստի թևի համար վերցնել 5 հետևեալ չափերը։

1) Ամբողջ թևի երկարութիւնը չափվում է մէջքի կողմ թևի փորուածքից ուսի մօտ, արմկի վրայով մինչև դաստակը, թև բռնել հորիզոնական դիրքով, չափը գրել ամբողջ.

2) Արմկի երկարութիւնը. այս չափը կարելի է միևնոյն ժամանակ վերցնել երբ վերցնում ենք ամբողջ երկարութիւնը և նշանակել թէ ամբողջ և թէ արմկի երկարութիւնը, չափը գրել ամբողջ։

3) Թևի փորուածքը. սանտիմետրով շրջապատել թևի փորուածքը և բերել ուսի վրայ, սանտ. բռնել թույլ և չափը գրել կէսը։



Նկար 20

4) դաստակի շուրջը վերցնել և գրել ամբողջ։

5) (ստուգիչ չափը) արմկի շուրջը. վերցնում է որոշելու արմկի հաստութիւնը երբ նա ծալած է. չափը գրել ամբողջ, և դնել փակագծերի մէջ։

Չափերը գրել այսպէս.

62—36 22—18—(30)

Թղթի ձախ կողմը քաշել ուղահայեաց և հորիզոնական գծեր և անկիւնում նշանակել A. իսկ ցածը Б. A-ից դէպի Б վերցնել թևի երկարութիւնը 62 ս. և արմկի երկարութիւն 36 ս. և յետոյ 62-ից և 36-ից քաշել աջ կողմը զիծ. A և в կլինի փորուածքի գիծը. 36 և г արմկի զիծը. A-ից դէպի в վերցնել փորուածքի չափը 22 ս. և աւելացնել

2 ս. ու նշանակել в. եթէ կարուում է այն ժամանակ որ թևը լայն են անում և փոթը շատ է պահանջում, պէտք է 2-ի տեղը աւելացնել 4 ս. և այլն. նախ քան արմկի լայնութիւն վերցնելը, պէտք է հաշուել սաստկած թիւը, թէ որքան է սաստկում ամեն մէկին. Պարիզի ձևի թևը պահանջում է, որ տակին երկու անգամ նեղ լինի, քան վերի մասը. սորա համար այն 30 ս., որ ունենք վերցած իբրև արմկի լայնութիւն, պէտք է բաժանել 3 մասի՝ 30 : 3=10 ս., որոնցից մէկ մասը կլինի տակի թևին, իսկ երկու մասը վերին թևի, ուրեմն վերին թևը կլինի 20 ս., իսկ տակինը 10 ս., 36-ից նախ վերցնել 5 ս. թևի միջի կար փորելու համար, և յետոյ 10 և 20 ս.։

Փորուածքի գծի վրայ A և 22 բաժանել մէջտեղը, նշանակել 11. այստեղից բարձրացնել 2 ս. և նշանակել Ж. և միացնել ուղիղ գծով արմկի 10-ին. յետոյ իջեցնել 11-ից 2 ս. նշանակել P. և ½ սանտ. ներս գալով նորից միացնել միևնոյն ձևով արմկի մօտ, որտեղ նշանակած է Г. в-ից իջեցնել 2 ս. նշանակել M. A-ից իջեցնել 10 ս. ձախ կողմը, աւելացնել 1 ս. նշանակել Л. սորանից յետոյ Л, Ж և M միացնել կոր գծով այնպէս, ինչպէս նկարը ցոյց է տալիս։ Л և P էլ միացնել տակի թևի փորուածքը։ Այժմ դաստակի լայնութիւնը, բա-

ժանել ինչպէս արմկի չափը, 18 : 3=6 ս.. 6 սանտ. վերցնել տակի թեւին, 12 վերին. 62-ից վեր բարձրացնել 5 ս. էլի 62-ից աջ կողմ վերցրել 12 ս. և միացնել 5-ի հետ, յետոյ այս գծի վրայ 5-ից դէպի 12 վերցնել 6 ս. և միացնել 20-ի հետ, 5, 5 և Л էլ միացնել ներս փորած գծով և այսպէս թեւը պատրաստ է։

ԺԱԿԵՏԿԻ (ՎԵՐԱՐԿՈՒԻ) ԹԵՒԸ.

Չափերը վերցնենք հետեւեալ կերպով.
62—35—22—20—(30)

Ա-ից քաշել ուղիղ երկար գիծ. և ծայրին նշանակել Б. Ա-ից դէպի Б նախ վերցնել 10 ս., յետոյ 35-ից և 62-ից աջ կողմը ծաշել ուղիղ գիծ և ծայրերին նշանակել Н, в, Г և Д, Ա-ի գիծը կլինի վերի թեւի փորուածքի գիծը 10 և в տակի թեւին. 35 և Г արմկի և 62—Д դաստակի գիծը։ Ա և 10-ից վերցնել փորուածքի սառցուած թիւը երկու անգամ. իմ օրինակը 22 է, երկու անգամ կսառցի 44 ս., որտեղ նշանակուած է Н և в, որպէսզի նկարել ոլոր ձևը՝ թեւի փորուածքի վերին մասը, Ա և Н բաժանել մէջտեղը և նշանակել Ж, այստեղից բարձրացնել 10 ս. նշանակել З. այս 10 ս. մշտական չէ, այլ կախուած է մօդայից, որքան բարձր կլինի թեւի ոլոր մասը, այն-

քան թեւը լայն կլինի։ 10-ից ձախ վերցնել 1 ս. նշանակել Л. в-ից վեր բարձրացնել 3



Նկար 21

ս. նշանակել С. Н-ից ձախ վերցնել 6 սանտ. նշանակել М. և յետոյ միացնել Л, З, М և С. այնպէս ինչպէս նկարի վրայ է։

Արմուկ. 36-ից ձախ դեռ վերցնել 5 ս. փորելու համար, իսկ յետոյ կէս. արմկից

ստացած թիւը աւելացնելով 5 ս. մենք ունենք արմկի չափը 30 ս., ուրեմն վերի թևի մասը ստացուց 20 սանտ., իսկ տակի թևին 15 ս.. իմ ուած օրինակից տակի թևը 15 ս. է իսկ վերին թևը 20 ս., այս 20-ը միացնել C-ի հետ նախ ուղիղ գծով, յետոյ $^1/_2$ ս. կոր գծով, J և M էլ միացնել ոլոր գծով, ինչ որ պարզ երևում է նաև նկարի վրայ։ 62-ից վեր բարձրացնել 5 ս. նշանակել H, այստեղից աջ վերցնել 13 ս. նրա համար, որ դաստակի հաշիւը փոխուած է բնական թւից։ այսպիսով 20 սանտ. ստացւում է դաստակի շուրջը, որը կիսել մէջտեղը և վերի մասին աւելացնել 3 ս.։ H և Д և կենի վերին թևը, իսկ H և 10 տակինը։ Д միացնել 20-ի հետ. արմկի մօտ, իսկ 10 միացնել 15 հետ. H էլ միացնել 5-ին կոր գծով։ Տակի թևի փորուածքը նկարել այսպէս. A-ից վերցնել փորուածքի ստացած թւի կէսը 11 սանտ. և էլի 2 ս. նշանակել П. այստեղից իջեցնել 2 ս. նշանակել P. և միացնել 15-ի հետ նախ ուղիղ, յետոյ $1^1/_2$ սանտ. դուրս եկած գծով։

ԻԼՊԿԱՆԵՐ (շրջագգեստ).

Իլպկանների ձևը այնքան տեսակ է փոխւում, որ դժւար է բոլոր ձևերը բացատրել. ես կբերեմ օրինակ այնպէս իլպ-

կի ձևը, որ կարողանայ ծառայել իրրև հիմք միւս ձևերի համար։ Իլպկի համար հարկաւոր է վերցնել 4 չափս.



Նկար 22

1) Առաջին փեշի երկարութիւնը.
2) Կողքի երկարութիւնը.
3) Մէջքի ծաւալը.
4) Ազդրների ծաւալը։

Կարելի է և վերցնել եռևի փեշի երկարութիւնը, մանաւանդ այն դէպքում երբ շէյլիֆով (քղանցքատուտ) են կարում։ Առաջին փեշի երկարութիւնը վերցնում են գօտիկից մինչև քղացքը, որ շփւում է յատակին. կողքի երկարութիւնը վերցնում են առաջին բաչօկի մէջքի գծից մինչև քղանցք ըստ ցանկութեան, մէջքի ծաւալը վերցնում են ոչ այնպէս ձիգ, ինչպէս լիֆի հա-

մաբ, իսկ ազդրների ծաւալը 18 ս. մէջքից ցած և այս չափան ու մէջքի ծաւալի չափերը գրում են կէս, իմ օրինակով ստացւած է հետևեալը՝

Առաջին փեշի երկարութիւնը	98	սանտ.
Կողքին	100	»
Մէջքի ծաւալը	30	»
Ազդրների ծաւալը	54	»

Բնական իւպկան ձևում և կտրում է 4 սեպաձև կտորներից, որ մենք անուանում ենք տախտակ.

Առաջքը Եռևի կամ 2-րդ կողքը
Կողքը Եռևի սեպաձև տախտակ.

Աւելի հեշտութեան համար մէջքի և ազդրների գիծը քաշել երկար և նրա վրայ նկարել բոլոր սեպաձև տախտակները, թէև կարելի է և ամեն մէկն առանձին։ Վերևում ասացի, որ ազդրների չափը վերցնում է 18 ս. ցած մէջքից, բայց ոչ ամենքի համար, այլ սանտիմետրը տանել ամենալայն տեղը՝ որտեղ կողքերքը բացը են, այնպէս որ երբեմն կտացւի 13—14 սանտ.։

Առաջին տախտակը գեղեցկութեան համար միշտ նկարել նեղ, որովհետև կազմուածքի տեսքը աւելի գեղեցիկ է լինում Առաջին տախտակն առհասարակ ձևել ամբողջ և մէջտեղը կոր չլինի։

Առաջին տախտակ.

A կէտից ցած քաշել ուղիղ գիծ և նշանակել B. A-ից ցած նախ չափել 4 ս., իսկ յետոյ այդ կէտից 18 ս., այսինքն կողքերի չափը, որ նշանակել B., իսկ 4 կէտից էլ քաշել ամբողջ երկարութիւնը 98 ս.

A, 18 և 98 կէտերով մի գիծ անցկացնել դէպի աջ, A-ից աջ վերցնել մէջքի ծաւալի հինգերորդ մասը, որ կլին առաջքի լայնութիւնը, և այսպէս՝

մինչև 30 ս. առաջքը վերևում լինում է 6 ս.
» 35 » » » » 7 »
» 40 » » » » 8 »

և այլն։

Ուրիշ կերպ ասած ամեն մի 5 սանտիմետրի աւելանում է 1 սանտ. առաջին տախտակում. մէջքի ծաւալում պատահող թուերը՝ 26, 27, 28, 29, ընդունում են հաշուի մէջ այնպէս, ինչպէս 30 սանտիմետրը. իսկ 31, 32, 33, 34 ինչպէս 35 ս. և այլն, որպէսզի աւելի հեշտ լինի մէջքի հաշիւը։

Ազդրների հաշիւը շատ հասարակ է. առաջին տախտակին աւելացնել 3 ս. կըստացւի 9 ս., սորա համար B-ից վերցնել 9 ս. նշանակել Γ. փէշի լայնութիւնը վերցնել ազդրների լայնութիւնից երկու անգամ աւելի։ Երբ կողքի լայնութիւնը 9 ս. է,

վ՝հշի լայնութիւնը վերցնել 98 կէտ. ս. և նշանակել Д ու միացնել Г-ի հետ ղիղ գծով, որը պէտք է շարունակել և անցնել մինչև Е տառը. А-ից իջեցնել 4 ս. իսկ Е-ից 3 ս. և միացնել իրար. 4-ից դէպի 3 վերցնել 6 ս. և միացնել Г-ի հետ ինչպէս ցոյց է տուած նկարի վրայ։ Ուրեմն առաջին տախտակը ստացւում հետևեալը՝

Մէջքը 6 ս.
Կողքը 9 »
Փէշը 18 »

Առաջին և ետևի կողքի տախտակներն այնքան նման են իրար, որ կարելի է միաժամանակ բացատրել. Մէջքի ծաւալն ունենալով 30 ս., պէտք է հանել 6 սանտ. առաջի տախտակի համար, որով կմնայ 24 ս., այս 24-ը բաժանել 3 մասի, մէկ մասը առաջին կողքին միւսը երկրորդին և երրորդը ետևին, ամեն մէկ մասը կլինի 8 ս. Նկարել միևնոյն տեսակ ինչպէս բացատրեցի առաջին տախտակը, մէջքի ծաւալին վերցնել. 8 ս., աղդրի 15 ս. իսկ փեշերը երկու անգամ առաջի կողքի լայնութեամբ, որով կստացւի 30 ս., իսկ երկրորդ կողքին աւելացնել 5 ս.. 30+5=35 ս.. ետևի տախտակին, 35+5=40 սանտ. կողքերքի հաշիւը։ Ամբողջ ծաւալը 54 ս. է և ամենից առաջ հանել այն 9 ս., որ վերցրինք առաջքին որով մնում է 45 ս.. այս 45 ս.

բաժանւում է 3 հաւասար մասերի և ամեն մէկ մասը ստացւում է 15 ս., իսկ մէջքի և կողքերքի ընդհանուր հաշիւ կլինի հետևեալը՝

Առաջքի տախտակը	մէջքը 6 ս.	կողքը 9 ս.	
Առջևի կողքը	» 8 »	» 15 »	
Երկրորդ կողքը	» 8 »	» 15 »	
Յետևի տախտակը	» 8 »	» 15 »	

Առջևի կողքի տախտակը.

А-ից իջեցնել 3 ս.—18 ս. և 98 ս., այս երկուսից քաշել աջ կողմը մի գիծ, Н-ից իջեցնել 2 ս. և միացնել 3-ի հետ, այս 3-ից դէպի Н վերցնել 8 սանտ., 18-ից աջ վերցնել 15 ս. և նշանակել Л և միացնել 8-ի հետ, փէշի լայնութիւն էլ վերցնել երկու անգամ՝ 15+15=30 ս.։ Միւս երկու տախտակն էլ նկարել միևնոյն տեսակ, միայն փեշերին աւելացնել 5-ական ս.։

ԿՈՂՈՐ ԻԻՊԿԱՅ (Клошъ)

Այս ձևը առանձին չի կարելի նկարել։ Առաջ նկարւում է բնական իւպկան ինչպէս որ բացատրեցի այնպէս, յետոյ նշանակելով համարներ պէտք է կարել ամեն մի տախտակ առանձին և դարսել, թղթի կամ կտորի վրայ այսպէս, առաջի տախտակն

ամբողջ երկարութեամբ վերցնել ուղիղ թեւի վրայ, մէջտեղը կար անել կամ ծալք (складка)։ Կարը չպէտք է կարել (строчить)



Նկար 23

մինչև քղանցքը (յատակը), այլ թողնել քղանցքից վեր 25–30 սանտ., իսկ ծալքն էլ մինչև ներքևը չի կարւում։ Ծալքի խորութիւնը իւրաքանչիւր կողմում 10 ս.-ից աւելի պէտք է չլինի։

Երկրորդ և երրորդ տախտակները դարսել այնպէս, որ կողքերի և մէջքի գծերը դէմ առ դէմ դան. վիտիշկէն նշանակել կտորի վրայ և կարել։

Չորրորդ տախտակը մէջքի մօտ դնել երրորդ տախտակին կցած և յետոյ շատ հեռացնել, որպէսզի ներքևում խոր ծալքեր ստացուին, որոնք սկսւում են կողքերից։

Փէշի լայնութիւնը. Առաջքի տախտակի լայնութիւնը ունենք 18 ս., որ պէտք է վերցնել 2 անգամ և նշանակել Ա. յետոյ դնել առաջին կողքը և դարձեալ աւելացնել 5 ս., (18+5=23) նշանակել Բ. դնել երկրորդ կողք աւելացնել դարձեալ 5 (23+5=28) նշանակել Ե. յետոյ դնել յետևի պախտակ Ж և աւելացնել 5 ս., (28+5=33) և այդպէս ձևել ամբողջ կտորը։

ԻԻՊԿԱ ԾԱԼՔԵՐՈՎ

Սոյն իւպկան նկարւում է կոլոր իւպկայի (клошъ) պէս հետևեալ փոփոխութիւններով. առաջքի տախտակը պէտք է կարել առանց մէջտեղի կարի, ձևի աջ կողմից մէջքից ցած 30 ս.-ից աւելացնել 10 ս. ծալքի համար, միևնոյն տարածութեամբ ձախ կողմն էլ աւելացնել 10 ս. և երկրորդ տախտակը, որ պէտք է չկարել երրորդ և չորրորդ տախտակներից. իւրաքանչիւր ֆասոնի կեղծ կօկետական կարել իւպկայի վերևից։ Սոյն իւպկան կարել կլոր և շատ յարմար է զբօսնելու համար։

ԻԻՊԿԱ ԱՄԶՈՆԿԱ

Այս իւպկէն ձևում են 2 կտորից և ներքանից ամեն մէկը առանձին տեսակ է.

մահուղը ծ[illegible]երկու տակ և դնել սեղանի վրայ, վերևից ծալածի կողմը վերցնել 2 անգամ 4 սանտ. նշանակել 4 և 8, ձախ կողմը քաշել գծեր. 8-ից ձախ վերցնել 2 ս. և աւելացնելով 4 ս. նշանակել Г և Д։ Որովհետև իմ վերցրած օրինակը 31 ս. է, մէջքի ծաւալը և կէսը կլինի $15^1/_2$, աւելացնելով 4 ս. կստացվի $19^1/_2$՝ Г և Д. միացնել В-ի հետ կոր գծով. Г և В-ի և Д-ի մէջտեղը նկարել վիտիշկան 2 ս. լայնութեամբ և 5 ս. երկարութեամբ։ В-ի մօտ շինել վիտիշկան 4 ս. լայնութեամբ և 10 ս. երկարութեամբ. А-ից ցած վերցնել իւպկի երկարութիւնը և աւելացնել էլի 25 ս. ու բոլոր 130 ս. նշանակել Б. յետոյ մէջտեղի վիտիշկայից սանտիմետրը ձիգ բռնելով տանել մինչև Е և Б, որ կլինի փէշի լայնութիւն ու միացնել Е և Б մի քիչ կորացած գծով, ինչպէս այդ նկարի վրայ է. Д և Е գծի վրայ շինել վիտիշկա ծնկից վեր 5 ս. խորութեամբ և 10 ս. եր-



Նկար 24

[illegible]եամբ. սա կլինի ձախ կողմի կէսը, իսկ աջ կողմի կէսը ինչպէս ցոյց է տուած նկարի վրայ, վերևում մօտաւորապէս 20 ս. ցած մէջքից, լայն է ձախից 10—12 ս. և ունէ 2 վիտիշկա, ամեն մէկը 8 ս. լայնութեամբ և 4 ս. երկարութեամբ։ Աջ կողմի փէշը նկարւում է Б-ից և նախ մի քիչ թեքւում է վերև, ապա հասնում 20 ս. երկարութեամբ կոորի ափին, մինչև Е կէսը։ Որպէսզի իւպկան քամուց չբարձրանայ, փէշի վրայ կարել կապարէ փոքրիկ ծանրութիւններ և ձախ ոտքի կողմը սեամնեվ, երիզ են կպցնում (штрипка).

ԻՒՊԿԱ ՐԷՖՕՐՄ ԵՒ ԿԱՄ ԿՕՐՈՒԱԺՈՎ

Ռէֆորմով հագուստը վերջերս խիստ ընդունւած է, մանաւանդ յարմար է այս ձևը նրանց համար, ով կորսէտ չի գործածում. եթէ թոյլ է հարկաւոր, մէջքի ծաւալի չափին վերցրածից 5 ս. պէտք է աւելացնել. նոյնպէս և կողկերքի (ազդրների) ծաւալին աւելացնել 5 ս.։

Չափը վերցնել հետևեալ ձևով՝

1) Իւպկի առջևիերկարութիւնը 98 ս.
2) Կողքի երկարութիւնը 100 »
3) Մէջքի լայնութիւնը 28+5=33 »
4) Կողքերի լայնութիւնը 55+5=60 »
5) Հիմնական չափը կօրսաժի համար (48) »

Ռէֆօրմի իւպկէն շատ է նման բնական իւպկին և զանազանւում է միայ մէջքի ու ազդրների հաշւից։ Կողկերքի գիծը հաւասար է իջնում. իմ աւած օրինակում մէջքի ծաւալը հաւասար է 28-ի աւելացրած 5 ս. ուրեմն 33 ս.-ի, դուրս գալ 33-ից այն 6., որ վերցնում ենք առաջքին, մնում է 27 ս. և այս բաժանել 3 հաւասար մասի, որով ամեն մէկը կտացւի 9 ս.։ Կողկերքի հաշիւը. 60-ից դուրս գալ այն 9 ս., որ



Նկար 25



Նկար 26

վերցնում ենք առաջի տախտակին. մնում է 51 ս., որը բաժանւում է դարձեալ 3 հաւասար մասի. ամեն մէկ մասը կտացւի 17 ս.. փէշերի հաշիւը նոյնն է, ինչ որ միւս իւպկաներին, այսինքն առաջի տախտակը վերցնել 2 անգամ աւելի կողքի լայնությունը

թիւնից. եթէ կողքի լայնութիւնը ունենք 9 ս., փէշին կտացւի 18 ս. երկրորդ կողքի տախտակը վերցրած է 2 անգամ, կողքի ծաւալը ունենք 17 ս., փէշը կտացւի 34 ս. երկրորդ միւս կողքի տախտակը միևնոյն տեսակ, միայն աւելացնել փէշին 5 ս. այսպիսով կտացւի 34+5=39 ս., եռևին՝ երրորդը նոյնն է և աւելացնել էլի 5 ս. 39+5=44 ս. և այսպէս կտացուի՝

	Մէջք,	կողք,	փէշը.
№ 1.	6	9	18
№ 2.	9	17	34
№ 3.	9	17	39
№ 4.	9	17	44

Վիտիշկէքը դծել ձեռքով.

ԿՈՐՍԱԺ

Հիմնական չափը, որ այս իմ օրինակում հաւասար է՝ 48 սանտիմետրի՝ բաժանել այսպէս. առաջքը (передокъ) վերցնել մէկ ու կէսով աւելի մէջքի համար վերցրածից, այսինքն 9՝ սանտ. դուրս գալով 9 ս. 48-ից կմնայ 39 ս., որը պէտք է բաժանել 3 մասի, որով ամեն մէկը կըստացւի 13 ս.։

Առաջին տախտակ։ A-ից վեր բարձրացնել կորսաժի բարձրութիւնը 18 ս. և նշանակել Б. այստեղից աջ վերցնել մէջքի ծաւալի ստացած 9 ս. և միացնել մէջքի 6-ին։ № 2 3—4-րդ տախտակները։ Որովհետև սրանք մէկ տեսակ են նկարւում, ուստի կրացատրեմ միայն մէկը։ Այն 9 ս., որ ստացւեց մէջքի ծաւալին, բաժանել մէջտեղ, և այստեղից բարձրացնել կորսաժի բարձրութիւնը 18 ս. և նշանակել Н. աջ և ձախ վերցնել $6^1/_2$ ս., որոնք կլինեն կորսաժի վերին մասը։ Հիմնական չափից ստացւած 13-ը բաժանած նշանակել A և M. յետոյ միացնել մէջքին նայելով նկարին, Ж և З-ի հետ։ Այս իւղկան նկարած է 7 կտորանի։

ՐԷՖՕՐՄ 5 ԿՏՈՐԱՆԻ

Սա նկարւում է 3 կտորից. № 1. առաջք. № 2. կողքը. № 3. եռևը. վերցնենք այսպիսի չափսեր.

Իւղկի առաջքի երկարութիւնը	98
	100
Կողքինը	30+5=35
Մէջքի ծաւալը	54+5=59
Կողքերքի ծաւալը	51։

Կորսաժ. Հիմնական չափը 51։

Եթէ ուզում ենք, որ ըէֆօրմը շատ թոյլ լինի, կարելի է մէջքի և կողքերքի ծաւալին 5-ի տեղ աւելացնել 7—8 ս. և այլն։ Առաջի տախտակը նկարւում է անփոփոխ, կողքի և յետևի տախտակները նկա-

ըել մէկ տեսակ, միայն յետևի փէշին աւելացնել 5 ս., իսկ մէջքի հաշիւ նոյնն է. եթէ մէջքի ծաւալի 30-ին աւելացրած է 5 և ստացուած է 35, պէտք է դուրս գալ առաջքի 6 ս. մնացած 29 ս. կիսել և կտատանք $14^1/_2$ ս. և այսպէս էլ վերցնել կողքերքի հաշիւը. ունենք 54 ս. աւելացնել 5 ս.=59 ս. դուրս գալ 9 ս. որ վերցրել ենք առաջին տախտակի համար, իսկ մնացած 50 ս. կիսել և կտացուի ամեն մէկին 25 ս.։

Փէշերի հաշիւը։ Առաջի փէշը վերցնել 2 անգամ աւելի, կողքերքին վերցրած էր 9 ս. ուրեմն այստեղ կտացուի 18 ս.։

Կողքի տախտակը նոյնպէս վերցնել երկու անգամ, կողքի լայնութիւնն ունենք 2 ս., ուրեմն փէշը կտացուի 50 ս. յետևի տախտակի համար էլ այս 50-ին աւելացնել 55 ս.։

Կորսաժ։ Առաջ բարձրացնել 18 ս., այստեղից աջ վերցնել դարձեալ 9 ս. որպէս աջ կողմը։ Հիմնական չափսի 51-ից դուրս գալ 9 ս. կմնայ 42 ս., որը կիսել և կտացուին 21-ական սանտիմեթր։

Այսպիսով կտացուեն հետևեալ չափսերը

Տախտակներ	Մէջք	Կողք	Փէշ	Կորսաժ.
№ 1.	6	9	18	9
№ 2.	$14^1/_2$	25	50	21
№ 3.	$14^1/_2$	25	55	21

Այս իւղկի ձևից կարելի է ձևել 4 կտրանի և 3 կտրանի իւղկաններ։ Եթէ ձևելու լինէք 4 կտրանի, պէտք է առաջի և յետևի տախտակը միատեսակ նկարել և մնացածը վերցնել կողքի կտրին, իսկ 3 կտրանիի համար հարկաւոր է առաջի տախտակը միևնոյն տեսակ հանել, իսկ կողքը և յետևինը միացնել մեծ թղթի վրայ և այնպէս միասին հանել։

ԵՐԵԽԱՅԻ ՀԱՄԱՐ ՐԷՖՕՐՄ

Այս ձևում առաջքը (передокъ) պէտք լինի առանձին ամբողջ երկարութեամբ.

Չափսերը վերցնենք հետևեալ կերպով.

25 —11—30—13—(30)—25—13

Մէջքը մինչև ծաւալի գիծը նկարել միևնոյն տեսակ առանց փոխուելու, իսկ իւղկի երկարութիւնը ստանալու համար Д-ից իջեցնել 10 ս. ձախ կողմը, աւելացնել 2 ս. և յետոյ Д և 2 միացնել, ուղիղ տանել այնքան, որքան ցանկանում են երկարացնել երեխայի հագուստն 8-ից և իջեցնել 10 ս. աջ կողմը, աւելացնել 2 ս. և դարձեալ այնպէս միացնել 8 և 2 տանել ամբողջ երկարութեամբ 30 ս. կամ աւելի ցած։

Կուրծքը նկարել ինչպէս մշտական լիֆը, փոխուում է միայն վիտիշկան. А-ից

մէջքի գծի վրայ ձախ վերցնել 10 ս. մէջքի ծաւալը ունենք 26+3=28, դուրս գալ այն 8 ս., որ ունենք մէջքի վրայ, կմնայ 20 ս., սրանից 10 վերցնել Ա-ից ձախ, իսկ միւս 10-ը Ե-ից աջ և նշանակել Բ. մնացած ինչ որ կմնայ վերցնել վիտէչկի մէջտեղը. Դ-ից թևի փորուածքից ձախ վերցնել մէկ փոքր չափս և նշանակել Է, յետոյ միացնել Դ, 10 և Ж, յետոյ Է, Բ և Ж, այնպէս ինչպէս նկարի վրայ է. վօլան (ծալուածք) կարել իւպկի վերևից։



Նկար 27

Այս ձևից կարելի է և կարել տակի լիֆ իւպկի հետ միասին. կուրծքը փորած. կարելի է կարել և գոգնոց։

Այս նկարը ցոյց է տալիս թէ ձևակաղապարը՝ (выкройка) ամեն մէկ մասը ինչպէս դասել կտորի վրայ, և ցոյց է տալիս թէ հանած կաղապարից որքան պիտի աւելացնել կարի համար, պէտք է կարել ուղիղ սև գծի վրայ, իսկ աւելացրած սպիտակ գծերը պիտի մնան կարից դուրսը։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԹԵԻԼ

Այս թևի ձևը շատ հասարակ է և հարկաւոր է միմիայն 3 չափս, 1) թևի երկարութիւնը, 2) փորուածքի շուրջը, 3) դասրութիւնը։



Նկար 28

տակի շուրջը։ Թղթի վրայ քաշել ուղիղ երկար գիծ, օրինակի համար, 60 սանտիմետր երկարությամբ, վերի ծայրին նշանակել Ա. ներքևը Բ. Ա-ից բարձրացնել գիծը 25 սանտ. նշանակել Գ, այս 25-ը մշտական չէ, կարելի է և վերցնել 15 և այլն և դա կախված է մոդայից. 25-ի և 60-ի վրայ քաշել աջ ու ձախ հատիչ գիծ, 25-ի գծի վրայ աջ ու ձախ վերցնել փորուածքի ստացուածի թեի կէսը, օրինակի համար 22 ամեն մի կողմը, աւելացնելով 5-ական սանտ., ուրեմն 27 սանտ.։ 60-ի գծի վրայ վերցնել դաստակի ստացուածի կէսը, օրինակի համար 9 սանտ. ամեն մի կողմը, աւելացնելով 6 սանտ. ամեն մի կողմը կստացուի 15 սանտ. 60-ից իջեցնել 3 սանտ. և միացնել 15-ի հետ երկու կողմն էլ. մնացած գծերը միացնել նայելով նկարին։

ՓՈՓՈՎ ԹԵԻԸ (Рукавъ съ буфой)

Նախ բան փոթ նկարելը պէտք է նկարել բնական թևը, յետոյ կտրել և 2 մասն էլ դարսել թղթի վրայ ինչպէս ցոյց է տուած նկարի վրայ, նրանց մէջտեղը եղած տարածութիւնը կախուած է մոդայից. թղթի մէջտեղ քաշել ուղիղ գիծ Ա և Բ։ Ա-ից դէպէ Բ-ն վերցնել նախ 25 սանտ. և յետոյ 15—20-ը, նայած մեծութեանը։ Իմ օրի-

նակում դա հաւասար է 18 ս. նշանակուած է Ж. 25-ի և Ж-ի վրայ քաշել աջ ու ձախ գիծ, ծայրերին նշանակել Բ, Գ, Д և Е.



Նկար 29

25-ից երկու կողմն էլ վերցնել 20-ական սանտ. և աւելացնել 15, նշանակել Л և К յետոյ կտրած թևի ձևը դարսել այս թղթի վրայ՝ այնպէս որ 10 և 10-ը ընկնեն Л և К-ի վրայ։ Ж-ից աջ ու ձախ վերցնել թեի փորուածքի չափը, միայն աւելացնել 10 ս. և նշանակել И և Н, յետոյ դարսել ձևակաղապարը (выкройка), այնպէս որ

ընկնի մէկ կ[illegible] Ի վրայ, միւս կողմը Յ և Կ-ի վրայ։ Յ և Կ միացնել Ա-ի հետ խիստ կերպով ոլորած գծով ինչպէս ցոյց է տուած նկարի վրայ։ Եթէ փոթը աւելի փոքր է հարկաւոր, 25-ից աւելացնել 15-ի տեղը 10 կամ 12 ս.։ Փոթը պէտք է հաւաքել նայելով մօդային և ցանկութեանը։

ՎԵՐԱՐԿՈՒ



Նկար 30 և 31

Սրա չափերը ընդհանուր ձևով են վերցնւում, մէջքն էլ նկարւում է սովո-

ական ձևով, միայն փոխւում է այնքանով ու�ը Ж-ից երկարացնել 1 ս., թևի փոր-ւածքի համար 11-ից իջեցնել ցած մէկ մեծ չափս, այստեղից աջ վերցնել մէկ փոքր չափս և նշանակել И ու միացնել 1-ի հետ կոր գծով։ Մէջքի համար 25-ից ձախ վերց-նել փոքր չափս և նշանակել Л. ու միացնել Ա-ի հետ՝ օձիքին ուղիղ գծով և 25-ից շա-րունակել ցած ամբողջ երկարութեամբ ու նշանակել В, 8-ից էլ աջ վերցնել մէկ մեծ չափս նշանակել Б և միացնել И-ի հետ, տանել մէջքի գծից ցած և նշանակել Г.։ Կուրծքը նկարել առանց փոխելու, բացի վիտիշկան, որ հանած է բոլորովին։ Մինչև 8 տարեկան երեխայի համար նկարւում է մէկ տեսակ, միայն աղջկայ վերարկուի փէշը վերցնել լայն, նայելով մօդային։

ՄԱՏՐՈՍԿԻ ԿՈՍՏԻՄ

Մէջքը նկարել վերարկուի նման մէջքի գծից ցած աւելացնել 5 ս. և եթէ ցանկա-նան աւելի լայն ձևել, Կ-ից ձախ կողմ ա-ւելացնել 1—2 սանտ., կուրծքը նկարել դար-ձեալ վերարկուի ձևով, միայն կողքի գծից ձախ կողմ աւելացնել մէկ փոքր չափս նշանակել Ч և միացնել У-ին՝ թևի փորւած-քին, յետոյ У-ից իջեցնել $1^1/_2$ ս. և միացնել Ч-ի հետ փորւածքը լայնացնելու համար։

Մէջքի գծից իջեցնել 5 ս. փոքր քաշելու համար. եթէ ցանկանում են աւելի լայն ձևել, կրծքի լայնութեան գծին աւելա-


Ա
Մ
Օ
Կ
Բ
Դ
Ա
Ի
Ղ
Ի
Ք
Ի
Ի
Ի

խայի կօսափումը պէտք է կտրել կարճ և յետոյ կարելի է ձևել կուրծքը ծածկած ձևով (двухбортный).

ՄԱՆԿԱԿԱՆ ՈՒՄՆՈՑ (перелина)

Նախ քան ուսնոց նկարելը՝ չափել նրա երկարութիւնը. իմ օրինակը վերցրած է 23 սանտ., նկարում է չորս անկիւնանի, որը հաւասար է 23 սանտիմետրի, նշանակած է А, В, Г և Б։ А և Б-ն միացնել ուղիղ գծով, մանկական ուսնոցի ուսի երկարութիւնը առհասարակ լինում է 8—12 ս. իմ օրինակում վերցրած է 9 ս. А-ից դէպի В, Б, Г վերցնել 10—10 ս. և նշանակել Д, Е, Ж։ Е-ից դէպի Б-ն չափել ուսի երկարութիւնը 9 ս. և ուսանոցի երկարութիւնը 23 ս., աւելացնել 3ս., որը անցնելու համար նշանակել З և միացնել կոր գծով Ж-ի հետ ձեռքով, նայելով նկարին։ Ж և Е միացնել թեթև կոր գծով։ Մէջքը. Д-ից ձախ վերցնել մէկ մեծ չափ



Նկար 37

ու նշանակել К, և միացնել И-ի հետ. Ж-ի և З-ի տարածութիւնը կարելի է միացնել և ուրիշ ձևով այդ կախուած է մօդայից։

ՏՂԱՅԻ ՎԱՐՏԻԿԸ (Панталоны)

Չափը. 1. Երկարութիւնը 36, վերցնել կողքից.
2. Մէջքի ծաւալը 32.
3. Հիմնական չափը (36)



Նկար 38 և 39

Ետևի մասը. А-ից ցած քաշել ուղիղ գիծ և վերցնել 36 ս. երկարութիւն, յետոյ А և 36 բաժանել մէջտեղը, կտացրի 18 ս., այստեղից ցած իջեցնել մէկ մեծ չափ և նշանակել Б. А-ից, 36-ից և Б-ից քաշել

աջ կողմը գիծ, Ա-ից աջ վերցնել մէջքի ծաւալի կէսը 16 ս., նշանակել Բ. Բ-ից աջ էլ վերցնել 16-ս. և մէկ մեծ չափս ու նշանակել Գ. 36-ից էլ վերցնել 16 ս. առանց աւելացնելու և նշանակել Դ։ 36-ից բարձրացնել 1 սանտ. և միացնել Դ-ի հետ, յետոյ Դ և Գ միացնել նախ ուղիղ, յետոյ $1^1/_2$ սանտիմետր խորութեամբ. Գ և Բ միացնել ուղիղ գծով $^1/_2$ ս. խորութեամբ մէջտեղը և տանել վեր մէկ մեծ չափի մեծութեամբ նշանակել Ա, և միացնել Ա-ի հետ, քիչ ցած գծով. Ա-ից ձախ վերցնել մէկ մեծ չափս, յետոյ 2 ս. և շինել վիտիշկա, ինչպէս նկարի վրայ է։ Առաջի մասը նկարւում է միևնոյն տեսակ, միայն Բ-ից չի հարկաւոր աւելացնել, այլ պէտք է իջեցնել 1 ս. և միացնել Ա-ի հետ։

Փոթով վարտիկ (напускъ)։ Պէտք է նը-կարել միևնոյն տեսակ, միայն լայնութեան վրայ Գ-ից աւելացնել մէկ փոքր չափս, նմանապէս և Բ-ից և Դ-ից, երկարութիւնն էլ 36-ից աւելացնել 8 ս., իսկ մնացածը նոյնն է։

ԵՐԵԽԱՅԻ ՇՈՐԸ ԿՈՒՐԾՔԸ ՓՈՐԱԾ

Որովհետև այս ձևի (կիսաբաց—декольте) գլխաւոր նպատակն այն է, որ կուրծքը և ուսերը բաց լինեն, դրա համար էլ վերևի

մասը ամբողջովին պէտք է փոփոխել, մանաւանդ թևի փորուածքը։ Մէջքը նկարել բնական լիֆի նման, ուսի գիծը Ж-ից երկարացնել 1 սանտիմետրով, և միացնել Մ-ի



Նկար 40

հետ կոր գծով, 1-ից դէպի Ж չափել 1—4 ս. և միացնել Դ-ի հետ կոր գծով։ (Նայեցէք նկարին)։

Կուրծքի մասը. Ж և Е գծի վրայ Գ-ից ձախ վերցնել 3 մեծ չափս ու նշանակել О և միացնել Բ-ի հետ ուղիղ գծով, յետոյ О-ից աջ վերցնել ուսի լայնութիւնը 1—4 ս. 14-ից՝ բօրտի, այսինքն եզրագծի վրայ վերցնել 1—4 ս. դէպի վեր և միացնել ուսին՝ 4-ի հետ կոր գծով, որը կլինի կուրծքի փորուածքը։ И և К-ն բաժանել մէջքի փորուածքը։

տեղը նշանակել Л. և միացնել O-ի և T-ին, կոր գծով, որ կլինի թևի փորուածքը։ Մնացածը նույնն է, ինչպես բնական լիֆը։



Նկար 41

ԵՐԵԽԱՅԻ ԹԵԻԼ

Այս թևի ձևը այնքան պարզ է երևում նկարի վերայ, որ աւելորդ եմ համարում բացատրել. նայեցէք նկարին և բոլորը հասկանալի է։

ԿՕՐՍԵՏ

Կօրսետ նկարելու համար վերցնում են դարձեալ 5 չափս ինչպես կանանց լիֆի համար միայն աւելացնել մէկ չափս՝ ազդրների ծաւալը. (объемъ бедеръ)։

Ենթադրենք վերցրած են հետևեալ չափսերը։

41—48—(48)—32—23

Ազդրների ծաւալը 50 սանտ.

Մէջքի ծաւալից պէտք է պակասցնել 4 ս. որպէս զի կօրսետը ձիք լինի, կուրծքը բաժանել 4 մասի՝

1) Բօրտ, այսինքն տարածութիւն եզրագծից մինչև վիտիշկայ.

2) Վիտիշկէքի մէջտեղինը.

3) Կուրծքի առաջին մասը (часть передка).

4) Կուրծքի երկրորդ մասը (часть передка).



Նկար 42

Մէջքը և յետևի բաչօկը (կողքը) նկարւում է նոյնպէս ինչպէս տէօդորի լիֆը, փոխւում է միայն մէջքի ծաւալի հաշիւը այսինքն, 41-ից աջ չպէտք է փորել այն 2 սանտիմետրը, որ անում ենք լիֆի համար, այլ ուղիղ պէտք է վերցնել 41-ից սահաց ուած 3 ս. ամեն կազմուածքի համար, ուրեմն մեր ուած հաշուից կտաց՝ի 6 սանտիմետր։

Կօրսետի բարձրութիւնը որոշելու համար 41 և Б-ն բաժանել մէջտեղը և նշանակել В, այստեղից աջ կողմը քաշել գիծ նշանակել Г, որ կլինի բարձրութեան գիծ. Г-ից իջեցնել 2 ս. և միացնել В-ի հետ. այս գծի վրայ պէտք է ձևել մէջքը և յետևի կողքը (բաչօկ)։

Փէշի երկարութիւնը. 6-ից իջեցնել 10 ս. աջ կողմը, աւելացնել 2 ս. և միացնել 6-ի հետ 13 ս. երկարութեամբ. 41-ից էլ իջեցնել 15 ս. և միացնել 13-ի հետ. բաչօկի ձախ կողմը իջեցնել 13 ս., ձախ աւելացնել 1 ս. և միացնել մէջքի գծին, յետոյ աջ կողմը իջեցնել 12 ս., աջ աւելացնել 2 ս. և դարձեալ միացնել մէջքի գծին, յետոյ ներքևը 13 և 12 իրար հետ միացնել։

Կուրծքը նկարւում է միևնոյն տեսակ ինչպէս լիֆը, միայն օձիքի գծի վրայ աջ կողմը պէտք է վերցնել մէկ մեծ չափսը, $1\frac{1}{2}$ փոքր չափս, յետոյ կրծքի լայնութիւնը վերցնել ուղիղ երկու երրորդական մասը, (առանց աւելացնելու $\frac{1}{2}$ ս. ինչպէս այդ անում ենք լիֆին)։ Սրանից յետոյ նկարել առաջի կողքը. М-ից ձախ կողմը վերցնել 1 ս. և յետոյ ստացած բաչօկի լայնութիւնը $4\frac{1}{2}$ ս. ու նշանակել А և միացնել Л-ին ուղիղ գծով փոքր ածրի մօտ. А-ից դէպի Л վերցնել $14\frac{1}{2}$ ս. կորսետի բարձրութիւնը և նշ. Б, այստեղից քաշել աջ ուղիղ գիծ և նշանակել В։ Մէջքի հաշիւը բոլորովին շեղւում է ընդհանուր կանոնից։

1) Տարածութիւն եզրագծից մինչև վիտիշկան վերցրած է այնքան, որքան վերցնում ենք լիֆի համար մէջքի վրայ, այժմ ստացւում է 3 ս.։

2) Վիտիշկաների մէջտեղի տարածութիւնը միշտ վերցնել կօրսետի համար 3 ս.։

3) Մէջքի ծաւալից դուրս ենք գալիս մէջքի լայնութիւնը 6 ս.՝ վիտիշկաների և եզրագծի մէջտեղի տարածութիւնը 3-ական ս., ընդամենը 12 ս. և այս 12 ս. դուրս գալով 28-ից, մնացած 16-ը բաժանել 4 մասի, այնպէս որը ամեն մի բաչօկի լայն մասը ստացւի 4 սանտ., որովհետև 4 բաչօկ է նկարւում։ Բայց որովհետև բաչօկները մէկ տեսակ լայնութեան չենք վերցնում, ուստի երկու առաջի կողքին վերցրած է $3\frac{1}{2}$ ս., իսկ երկու յետևինը $4\frac{1}{2}$ ս. վիտիշկան ստացած թւից պակասցնել 2 ս., օրինակի համար. հիմնական չափսը ունենալով 48 ս. պէտք է առաջի վիտիշկան լինի 5 ս. լայնութեան, պակասեցնելով 2 ս., կլինի 3 ս., իսկ երկրորդ վիտիշկան վերցնել առանց պակասցնելու առաջին վերցնել առանց պակասցնելու՝ 5 ս.։ Վիջին վիտիշկայի լայնութիւնը՝ 5 ս.։ Վիտիշկաների վերին մասի տարածութիւնը իրարից վերցնել այնպէս ինչպէս լիֆի համար ենք հաշւում, այսինքն 5-ին աւելա-

ցնել 1½ ս., որով կստացվի 6½ ս.. սորանից յետոյ Г-ից բարձրացնել 1 ս. և միացնել М-ին ուղիղ գծով։ Յետոյ նկարել կուրծքը (передокъ). ինչպէս ասացի բաժանվում է 4 մասի, եզրագծի (բօրտից) Г-ից իջեցնել 15 ս., այստեղից ձախ վերցնել 3 ս., ունենալով ներքև 15-ից ձախը 3 ս., վերևի մասը լայնանում է 2 սանտիմետրով, որը նշանակված է В-ից ձախ 5 ս., որը միանում է վիտիշկին՝ З-ին և այնտեղից էլ 14-ին, 14 և 15 էլ միացնել իրար. В-ից վեր բարձրացնել 2 ս. և միացնել 5-ին։ Վիտիշկանների մէջտեղը վերցնել З-ից ձախ 3 ս. և նշանակել Д ու միացնել 5-ին, Л-ից իջեցնել ուղիղ գիծ 14 ս. երկարութեամբ. 5-ից ձախ վերցնել 6½ ս. և նշանակել Ж, ձախ կողմ վերցնել 1 ս., այստեղից էլ իջեցնել 1 ս. և միացնել 5-ին. յետոյ 1 ս. միացնել Е-ին, Е-ից իջեցնել գիծ 12 ս. երկարութեամբ, յետոյ ձախ կողմը վերցնել 3 ս. և միացնել Е-ին. Е-ից ձախ կողմը վերցնել երկրորդ վիտիշկի լայնութիւնը 5 ս. և միացնել 1-ին Ж-ի մօտ. սորանից յետոյ М-ից բարձրացնել մէկ փոքր չափս և միացնել 5-ին՝ վիտիշկին. յետոյ 5-ից ձախ կողմը վերցնել 3½ ս. ու նշանակել К, այստեղից ձախ 2 ս. ու նշանակել Л, 2-ից էլ ձախ վերցնել 3½ ս. և նշանակել Н. կօրսետի բարձրութեան գծի վրայ հիմնական չափից պէտք է պակասցնել 4 ս., սորա համար Ж և З-ն բաժանել մէջտեղը և նշանակել И, որից աջ ու ձախ վերցնել 1 ս. ու նշանակել а և б, յետոյ З-ից աջ վերցնել 2 ս. ու միացնել а К-ի հետ, իսկ б Л-ի հետ, և 2 էլ Н-ի հետ, մէջքի ծաւալի գծի վրայ։ а-ից իջեցնել 3 ս. և միացնել Ж-ից իջեցրած 1-ի հետ։ Յետոյ № 3, К-ից ցած իջեցնել 10 ս., սորանից ձախ վերցնել 2 ս. և միացնել 13-ի հետ. Б-ից իջեցնել 3 ս. և միացնել 2-ին ձախ կողմը. Л-ից իջեցնել 10 ս. աջ կողմը, աւելացնել 2 սանտ. Н-ից էլ իջեցնել 10 ս. ձախ, աւելացնել 1 ս., գծերը երկարացնել մինչև 12 ս. և միացնել։ Առաջին կողմը. М-ից ձախ վերցնել 1 ս., յետոյ ստացած թիւը 4½ ս. նշանակել А, այստեղից բարձրացնել ետևի կողքի բարձրութիւնը և նշանակել П. ձախ կողմը աւելացնելով ½ ս. և միացնել А-ին, П-ից ձախ քաշել ուղիղ գիծ ու նշանակել Р. այստեղից իջեցնել 1 ս. միացնել П-ին յետոյ Р-ն միացնել մէջքի գծի վրայ1-ին, կոր գծով, ցածը աջ կողմը փեշի լայնութեան աւելացնել 2 ս. իսկ երկարութիւնը վերցնել 11 ս. ձախ կողմի լայնութիւնը աւելացնել 1 ս. Երկարութիւնը 12 ս. և միացնել 11 և 12-ը։ Նախքան կօրսետի ձևակազապարներ կարելը, պէտք է նշանակել ամեն մէկ մասը №-նե-

բով, որպէսզի չխառնուին միմեանց կպցնելու ժամանակ։

ԱՆԴՐԱՎԱՐՏԻԿ (Панталоны)

Նկարել հետևեալ ձևով. քաշել ուղղահայեաց գիծ А և Б. А-ից դէպի Б վերցնել ամբողջ երկարութիւնը 102 ս. և նշանակել Б, այստեղից ձախ կողմը վերցնել 5 ս. ու նշանակել Г, յետոյ В-ից ձախ վերցնել 8 ս. և նշանակել Д ու միացնել Г-ին վերևի մասը քիչ ծռած։ Д-ից ձախ վերցնել մէջքի ծաւալի ստացած թուի կէսը աւելացնելով 2 ս. (մեր օրինակն է 17½ ս.) և նշանակել Е, այստեղից ցած իջեցնել 2 ս. նշանակել Ж և միացնել Д-ին ուղիղ, մէջտեղը վերցնել 2 ս. վիտիշկայ և 10 ս. երկարութիւնը. Г-ից ձախ վերցնել կէս լայնութիւնը 2 ս. պակաս (մենք ունենք 11 ս.) և նշանակել Н ու միացնել ուղիղ Ж-ին, այս գծի վրայ Ж-ից իջեցնել քառորդ մասը ամբողջ երկարութիւնից (մենք ունենք 21½ ս.) ու նշանակել К, այստեղից ձախ 7 ս. ու նշանակել Л և միացնել Л, Ж և Н կոր գծով, նայելով նկարին ու կտաց-ի պանտալօնի առաջին մասը։



Նկար 48

Այժմ անցնենք ետևի մասին։ А-ից ձախ քաշել գիծ և վերցնել մէջքի ծաւալի կէսը, աւելացնել 2 ս., այսինքն 17½ ս. և նշանակել М և միացնել В-ին ուղիղ գծով, մէջտեղը նկարել վիտիշկա դարձեալ 2 ս. լայնութեամբ և 10 ս. երկարութեամբ, Л-ից ձախ վերցնել 7 ս. ու նշանակել Н և միացնել М-ին կոր գծով. 20 ս. ցածը Е և В-ից քաշել ուղիղ գիծ և սորա վրայ չափել կողքերքի ծաւալի լայնութիւնը և մնացածը աւելացնել ու նշանակել О. Г-ից ամբողջ կողմը և И-ից ձախ կողմը աւելացնել 2 ս. և միացնել մէկը Н-ին, իսկ միւսը В-ին, այնպէս ինչպէս նկարը ցոյց է տալիս. պէտք է անցնի գիծը О-ի վրայ, և այսպէս յետևի մասն էլ պատրաստ է։ Ներքև կարել շորիպկէք։



ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС БИБЛИОТЕКА
ՀԱՍՌ-Арм.ССР
Ա. ԱՍՏԱՖԻԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. МАСНАФЯНА

ՀՀ Ազգային գրադարան
NL0297726

27.985